



Համարը N 1239-Ն
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2012.10.17/50(924).1
Հոդ.1112.1

Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 15.01.2013

Տեսակը Հիմնական
Գարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան

Ընդունման ամսաթիվը 20.09.2012
Ստորագրման ամսաթիվը 05.10.2012
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

- Կապեր այլ փաստաթղթերի հետ
- Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի N 867 ՈՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 սեպտեմբերի 2012 թվականի N 1239-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի N 867 ՈՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ և 17-րդ հոդվածի 2-րդ մասերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի «Հայաստանի Հանրապետությունում դարտադրության, դեղատնային գործունեության, բժշկական օգնության և սպասարկման, բժշկական միջին մասնագիտական բարձրագույն կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման կարգերը և նշված գործունեությունների իրականացման լիցենզիայի ձևերը հաստատելու մասին» N 867 որոշումը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝ սույն որոշման պաշտոնական հրապարակումից 1 եռամսյա ժամկետում հաստատել որոշումից բխող իրավական ակտերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող իննսուններորդ օրը՝ բացառությամբ սույն որոշումն ուժի մեջ մտնելը դեղերի արտադրության, դեղատնային գործունեության, բժշկական օգնության և սպասարկելու ինչպես նաև բժշկական նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն (մասնագիտական) կրթական ծրագրերի իրականացման լիցենզիա ստացած անհատ ձեռնարկատերերի և իրավաբանական սուբյեկտների համար սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

S. ՍԻ

2012 թ. հոկտեմբերի 5
Երևան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հունիսի 2002 թվականի N 867

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ԴԵՂԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՒ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ, ԲԺՇԿԱԿԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ), ՄԻՋԻՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ (ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ) ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄ
ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ԵՎ ՆՇՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻ
ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ և 17-րդ հոդվածի 2-րդ մասերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետությունում դեղերի արտադրության իրականացման լիցենզավորման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետությունում դեղերի արտադրության իրականացման լիցենզիայի NN 1 և 2 ձևերը՝ համաձայն հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետությունում դեղատնային գործունեության իրականացման լիցենզավորման կարգը՝ համաձայն հավելվածի.

4) Հայաստանի Հանրապետությունում դեղատնային գործունեության իրականացման լիցենզիայի NN 1 և 2 ձևերը՝ համաձայն հավելվածի.

5) Հայաստանի Հանրապետությունում կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնություն սպասարկման իրականացման լիցենզավորման կարգը՝ համաձայն N 5 հավելվածի.

6) Հայաստանի Հանրապետությունում կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնություն սպասարկման իրականացման լիցենզիայի NN 1 և 2 ձևերը՝ համաձայն N 6 հավելվածի.

7) Հայաստանի Հանրապետությունում բժշկական նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական (մասնագիտական) կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման կարգը՝ համաձայն N 7 հավելվածի.

8) Հայաստանի Հանրապետությունում բժշկական նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական (մասնագիտական) կրթական ծրագրերի իրականացման լիցենզիայի NN 1 և 2 ձևերը՝ համաձայն N 8 հավելվածի.

2. Սահմանել, որ դեղերի որակն ապահովող հիմնական տեխնոլոգիական պրոցեսների նկարագրության, արտադրության տեխնիկական հագեցվածության, արտադրության կառուցվածքի գործառնական ստորաբաժանումների, արտադրության և ոչ հսկման կազմակերպման փորձաքննությունը կարող է իրականացվել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության և լիցենզիայի առկայության դեպքում, ինչպես նաև համապատասխան լիցենզիա ունեցող այլ կազմակերպությունների կողմից:

3. Սահմանել, որ բարդ լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը կարող են լիցենզավորող մարմին հան առձեռն կամ փոստով կամ էլեկտրոնային համակարգի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվ սեպտեմբերի 24-ի «Հանրապետական գործադիր մարմինների կողմից բարդ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից պարզ ընթացակարգերով տրվող լիցենզիաներ ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերն էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացնելու կարգը հաստատելու մասին» N 1283-Ն որոշմամբ սահմանված կարգով:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 1996 թվականի փետրվարի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում բժշկական և դեղագործական գործունեության պետական մասնագիտական լիցենզավորման մասին» I հունիսի 24-ի «Հայաստանի Հանրապետությունում բժշկական և դեղագործական գործունեության պետական մասնագիտական լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 188, 1997 թվականի ապրիլի 1-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 1996 թվականի փետրվարի 9-ի N 36 և հունիսի 24-ի N 188 որոշումների մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» N 1998 թվականի հոկտեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետությունում արդյունաբերական եղանակով դեղերի արտադրության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 616 որոշումները:

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ԱՐՏԱՊՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է առողջապահության բնագավառում իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատեր (այսուհետ՝ անձինք) կողմից մարդու կամ կենդանիների համար օգտագործվող, ինչպես նաև հետազոտական նպատակներում լիցենզավորման ենթակա դեղերի արտադրության (այսուհետ՝ դեղերի արտադրություն) իրականացման լիցենզավորման կա (այսուհետ՝ կարգ)՝ համաձայն «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) պահա

2. Դեղերի արտադրությունը դեղերի սերիական թողարկումն է, որն ընդգրկում է հետևյալ արտադրական գործընթացները՝ ելանյութերի ձեռքբերումը, արտադրական տեխնոլոգիական գործընթացները, որակի հսկումը, փաթեթավորումը (վերափաթեթավորում), պիտակավորումը (վերապիտակավորում), պահպանումը, բացթողումը և հարակից հսկողությունը: Հ հսկողությունն արտադրական գործընթացների նկատմամբ արտադրողի նշանակած պատասխանատու անձանց կողմից իրականացվող հսկողությունն է՝ ուղղված դեղերի արտադրության գործընթացներում պատշաճ արտադրական գործունեության կանոնների պահպանմանը:

3. Լիցենզիան տրվում է արտադրական գործընթացների առնվազն մեկի իրականացման համար՝ բացառությամբ առանձ ելանյութերի ձեռքբերման, պահպանման և որակի հսկման գործընթացների:

4. Հայաստանի Հանրապետությունում դեղերի արտադրություն իրականացնելու համար լիցենզիան տալիս (մերժում) է, լիցենզիայի գործողությունը կասեցնում կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում դադար է Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական լիազոր մարմինը՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը (այսուհետ՝ լիազոր մարմին):

5. Դեղերի արտադրության համար լիցենզիաները տրվում են բարդ ընթացակարգով, անժամկետ՝ օրենքով և սույն կարգով նախատեսված բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ 30 օրվա ընթացքում:

6. Դեղերի արտադրության լիցենզիաները տրվում են դեղերի արտադրության լիցենզիա ստանալու համար փորձաքննության իրականացնելու լիցենզիա ունեցող անձի (այսուհետ՝ փորձաքննություն իրականացնող կազմակերպություն) կողմից տրված փորձագիտական եզրակացության հիման վրա:

7. Լիցենզիա տալու համար գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանված կարգով և չափով:

8. Սույն կարգի համաձայն տրված լիցենզիաները գործում են դեղերի արտադրության կազմակերպման և իրականացման կանոնակարգին համապատասխան՝ լիցենզիայում նշված վայրում:

9. Դեղերի արտադրության լիցենզիա ստացած անձինք յուրաքանչյուր կիսամյակին հաջորդող ամսվա 10-րդ օրը լիազոր են ներկայացնում հաշվետվություն՝ արտադրվող դեղերի մասին՝ համաձայն սույն կարգի N 4 ձևի:

10. Լիցենզիայի վերաձևակերպումը, գործողության կասեցումը և դադարեցումը կատարվում են օրենքով սահմանված կա

II. ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՆ ԿԱԶՄԱՆԱԿՄԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

11. Հայտատուն դեղերի արտադրության լիցենզավորման համար օրենքի համաձայն ներկայացնում է՝

1) լիցենզիա ստանալու մասին հայտը՝ համաձայն NN 1 և 2 ձևերի, նշելով՝
ա. իրավաբանական անձը՝ անվանումը և կազմակերպական-իրավական ձևը, պետական գրանցման համարը, գտնվելու հեռախոսահամարը, գործունեության իրականացման վայրը և հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն և ինտերնետ պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում), լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը (որին հավակնում իրավաբանական անձը), հարկ վճարողի հաշվառման համարը,

բ. անհատ ձեռնարկատերը՝ անունը, ազգանունը, անձնագրի սերիան և համարը, բնակության վայրը և հեռախոսահամար գործունեության իրականացման վայրը և հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն և ինտերնետային պաշտոնակա հասցեն (առկայության դեպքում), լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը (որին հավակնում է անհատ ձեռնարկատեր պետական հաշվառման համարը, հարկ վճարողի հաշվառման համարը.

2) դեղերի արտադրության կանոնակարգում պարտադիր ներկայացվող տեղեկությունների ցանկը՝ երկու օրինակից՝ հա սույն կարգի N 3 ձևի.

3) «Չափումների միասնականության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պահանջներին համապատասխանող տեխնոլոգիական սարքավորումներով ապահովվածության մասին փաստաթուղթ

(փաստաթղթեր).

4) փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրված դրական փորձագիտական եզրակացություն՝ հայտավորված գործունեության համար նախատեսված ապրանքների, առարկաների, սարքավորումների վերաբերյալ.

5) լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը.

6) տեղեկանք՝ համաձայն սույն կարգի N 5 ձևի, տարածքների և տեխնիկատեխնոլոգիական հագեցվածության մասին.

7) տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 25-ի N 1603-Ն որոշմանը համապատասխան որակավորված անձի առկայության մասին՝ կցելով համապատասխան որակավորումը հավաստող բարձր մասնագիտական կրթության վկայականների, ինչպես նաև հետբուհական կրթության, վերապատրաստումների, այդ թվում՝ օտարերկրյա պետություններում վերապատրաստման վկայականների (հավաստագրեր) պատճենները.

8) տարեկան պետական տուրքի վճարման անդորրագիրը:

12. Եթե ներկայացված հայտի և կից փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, ապա լիազոր մարմինն առաջարկում է 10-ժամկետում լրացնել այն:

13. Դեղերի արտադրության լիցենզիա ստանալու համար ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկությունների համապատասխանությունը լիազոր մարմնի կողմից ուսումնասիրվում է տեղում և ուսումնասիրության արդյունքների հիման կազմվում է արձանագրություն:

III. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

14. Դեղերի արտադրության իրականացման համար լիցենզիա ստացած իրավաբանական անձը դեղերի արտադրության իրականացման լիցենզիայի պատճենները փակցնում է իր գտնվելու և գործունեության իրականացման վայրերի տեսանելի հատվածում, իսկ անհատ ձեռնարկատերը՝ իր գործունեության իրականացման վայրի տեսանելի հատվածում:

15. Հայաստանի Հանրապետությունում դեղերի արտադրության լիցենզիա ունեցող անձինք արտադրության մեջ օգտագործվելու պատշաճ արտադրական կանոններին համապատասխան արտադրված ակտիվ դեղագործական բաղադրամասեր:

16. Դեղերի արտադրության ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեղերի որակին չհամապատասխանող արտադրանքը որակի անհամապատասխանության հայտնաբերումից հետո ենթակա է հետ հավաքման օրվա ընթացքում և ոչնչացման լիազոր մարմնի հաստատած կարգին համապատասխան:

17. Արտադրողի կողմից դեղերի արտադրության յուրաքանչյուր սերիա ենթակա է լաբորատոր և փաստաթղթային փորձաքննության, որի իրականացման կարգը, ժամկետը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

IV. ԴԵՂԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ

18. Սույն կարգի 11-րդ կետի 2-րդ ենթակետում նշված պահանջը չի սահմանափակում հայտատուի կողմից դեղերի արտադրության գործընթացի մասին այլ տեղեկություններ ներկայացնելը: Դեղերի արտադրության լիցենզիայի հայտի բավարարման լիցենզիայի հետ միաժամանակ լիցենզավորված անձին տրամադրվում է դեղերի արտադրության կանոնակարգի՝ լիցենզիայի պատճենի ղեկավարի հրամանով հաստատված մեկ օրինակ:

19. Լիցենզավորված անձի կողմից դեղերի արտադրության կանոնակարգում կատարվող փոփոխությունները կամ լրացում կամ դեղերի արտադրության նոր կանոնակարգերը լիազոր մարմնի կողմից հաստատվելու նպատակով նախապես ներկայացված լիազոր մարմին՝ երկու օրինակից:

20. Յուրաքանչյուր հաջորդ դեղաձևի արտադրության դեպքում արտադրության կանոնակարգում փոփոխությունների կամ լրացումների նպատակով հայտատուն լիազոր մարմին է ներկայացնում նաև փորձաքննություն իրականացնող կազմակերպող կողմից տրված դրական եզրակացությունը՝ ըստ նոր դեղաձևերի՝ հայտավորված գործունեության համար նախատեսված ապրանքների, առարկաների, սարքավորումների վերաբերյալ:

21. Լիազոր մարմնի ղեկավարը 15-օրյա ժամկետում հրաման է ընդունում դեղերի արտադրության կանոնակարգում առաջարկված փոփոխությունները կամ լրացումները կամ նոր կանոնակարգը հաստատելու կամ դրանք մերժելու մասին: Հրամանի պատճեն աշխատանքային օրվա ընթացքում տրամադրվում (փոստով առաքվում) է լիցենզավորված անձին:

22. Դեղերի արտադրության կանոնակարգում կատարվող փոփոխությունները կամ լրացումները կամ դեղերի արտադրության կանոնակարգերը՝ լիցենզավորող մարմնի կողմից մերժվելու դեպքում, լիցենզավորված անձը կարող է դիմել դեղերի արտադրության կանոնակարգում փոփոխություններ կամ լրացումներ կամ նոր կանոնակարգ ընդունելու համար սույն կարգով սահմանված ընդհանուր կարգով:

23. Դեղերի արտադրության կազմակերպման և իրականացման կանոնակարգի փոփոխությունները կամ լրացումները կազմակերպողը լիցենզավորող մարմինը մերժում է, եթե դրանք՝

- 1) հակասում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը.
- 2) չեն համապատասխանում սույն կարգի N 3 ձևով նախատեսված դեղերի արտադրության կանոնակարգում պարտադիր ներկայացվող տեղեկությունների ցանկին.
- 3) նոր դեղաձևի արտադրության դեպքում՝ լիազոր մարմին չի ներկայացվել փորձաքննություն իրականացնող կազմակերպող կողմից տրված դրական եզրակացություն՝ հայտավորված գործունեության համար նախատեսված ապրանքների, առարկաների,

սարքավորումների վերաբերյալ:

24. Լիցենզիայի վերաձևակերպումը, գործողության կասեցումը և դադարեցումը կատարվում են օրենքով սահմանված կա

V. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՀԱՅՏԻ ՄԵՐԺՈՒՄԸ

25. Լիցենզիա ստանալու մասին հայտը մերժվում է հետևյալ պայմաններից որևէ մեկի առկայության դեպքում՝

1) ներկայացված հայտը և կից փաստաթղթերը թերի են և չեն լրացվել սույն կարգի 12-րդ կետով նախատեսված ժամկետ դրանցում առկա են ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված տեղեկություններ կամ,

2) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքի, այլ իրավական ակտերի և սույն կարգի պահանջնե

3) իրավաբանական անձն օրենքի կամ իր կանոնադրության համաձայն իրավունք չունի զբաղվելու հայցվող լիցենզավորու ենթակա գործունեությամբ կամ,

4) լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված տարածքը սեփականության, վարձակալության, ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով չի պատկանում հայտատուին կամ,

5) դեղերի արտադրության կանոնակարգը չի համապատասխանում սույն կարգի N 3 ձևով սահմանված պահանջներին կ

6) օրենքով և սույն կարգով նախատեսված այլ դեպքերում:

26. Լիցենզիա ստանալու հայտը մերժվելու մասին որոշումն ընդունվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում առ հայտատուին:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախար
լիցենզավորման հանձնաժողովի և

(անունը, ազգանունը)

Հ Ա Յ Տ

ԼԻՑԵՆԶԻԱ ՄՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Իրավաբանական անձի անվանումը և կազմակերպական-իրավական ձևը _____

2. Իրավաբանական անձի պետական գրանցման համարը _____

3. Իրավաբանական անձի գտնվելու վայրը և հեռախոսահամարը _____

4. Իրավաբանական անձի գործունեության իրականացման վայրը և հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն և ինտերնետային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում)

5. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը (որին հավակնում է իրավաբանական անձը)

6. Հարկ վճարողի հաշվառման համարը _____

7. Կից ներկայացվող փաստաթղթերը՝

1) դեղերի արտադրության կանոնակարգում պարտադիր ներկայացվող տեղեկությունների ցանկը՝ երկու օրինակից.

2) «Չափումների միասնականության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պահանջներին համապատասխանող տեխնոլոգիական սարքավորումներով ապահովվածության մասին փաստաթուղթ (փաստաթղթեր).

3) փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրված դրական փորձագիտական եզրակացություն՝ հայտավորված գործունեության համար նախատեսված ապրանքների, առարկաների, սարքավորումների վերաբերյալ.

4) լիցենզավորման ենթակա գործունեության տեսակի իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը.

5) տեղեկանք՝ տարածքների և տեխնիկատեխնոլոգիական հագեցվածության մասին.

6) տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 25-ի N 1603-Ն որոշմանը համապատասխան որակավորված անձի առկայության մասին՝ կցելով համապատասխան որակավորումը հավաստող բարձրագույն մասնագիտական կրթության վկայականների, ինչպես նաև հետբուհական կրթության, վերապատրաստումների, այդ թվում՝ օտարերկրյա պետություններում վերապատրաստումների վկայականների (հավաստագրեր) պատճենները (առկայության դեպքում):

7) պետական տուրքի վճարման անդորրագիրը:

Ներկայացված տեղեկությունների իսկությունը հաստատում եմ _____

(իրավաբանական անձ հանդիսացող կազմակերպության տնօրենի ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ օրը, ամիսը, տարեթիվը

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարար լիցենզավորման հանձնաժողովի ն

_____ (անունը, ազգանունը)

Հ Ա Յ Տ
ԼԻՑԵՆԶԻԱ ՄՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը _____
2. Անձնագրի սերիան և համարը _____
3. Բնակության վայրը և հեռախոսահամարը _____

4. Գործունեության իրականացման վայրը և հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն և ինտերնետային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում) _____

5. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը (որին հավակնում է անհատ ձեռնարկատերը) _____

6. Պետական հաշվառման համարը _____
7. Հարկ վճարողի հաշվառման համարը _____
8. Կից ներկայացվող փաստաթղթերը՝
 - 1) դեղերի արտադրության կանոնակարգում պարտադիր ներկայացվող տեղեկությունների ցանկը՝ երկու օրինակից.
 - 2) «Չավիումների միասնականության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պահանջներին համապատասխանող տեխնոլոգիական սարքավորումներով ապահովվածության մասին փաստաթուղթ (փաստաթղթեր).
 - 3) փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրված դրական փորձագիտական եզրակացություն՝ հայտավորված գործունեության համար նախատեսված ապրանքների, առարկաների, սարքավորումների վերաբերյալ.
 - 4) լիցենզավորման ենթակա գործունեության տեսակի իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը.
 - 5) տեղեկանք՝ տարածքների և տեխնիկատեխնոլոգիական հագեցվածության մասին.
 - 6) տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 25-ի N 1603-Ն որոշմանը համապատասխան որակավորված անձի առկայության մասին՝ կցելով համապատասխան որակավորումը հավաստող բարձրագույն մասնագիտական կրթության վկայականների, ինչպես նաև հետրուհական կրթության, վերապատրաստումների, այդ թվում՝ օտարերկրյա պետություններում վերապատրաստումների վկայականների (հավաստագրեր) պատճենները (առկայության դեպքում).
 - 7) պետական տուրքի վճարման անդորրագիրը:

Ներկայացված տեղեկությունների իսկությունը հաստատում եմ _____

(անհատ ձեռնարկատիրոջ ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ օրը, ամիսը, տարեթիվը

Ց Ա Ն Կ

Դ Ե Ղ Ե Ր Ի Ա Ր Տ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ Պ Ա Ր Տ Ա Դ Ի Բ Ն Ե Ր Կ Ա Յ Ա Յ Վ Ո Ղ Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ի

Փորձագիտական եզրակացության համարը, օրը, ամիսը, տարեթիվը _____

1. Հայտատուի անունը, ազգանունը կամ անվանումը _____
2. Կազմակերպական-իրավական ձևը _____
3. Գտնվելու (բնակվելու) և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարները, էլեկտրոնային փոստի և ինտերնետային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում) _____

	<p>1. Արտադրության տեսակը՝</p> <p><input type="checkbox"/> Մարդու օգտագործման դեղերի արտադրություն</p> <p><input type="checkbox"/> Անասնաբուժական դեղերի արտադրություն</p> <p><input type="checkbox"/> Հետազոտական նպատակներով դեղերի արտադրություն</p> <p>Արտադրական գործընթացների տեսակները</p>
1.	Ստերիլ արտադրանք
	<p>1) <i>Ասեպտիկ պայմաններում արտադրված դեղաձևեր</i></p> <p>ա. Մեծ ծավալով հեղուկներ</p> <p>բ. Լիոֆիլիզատներ</p> <p>գ. Փափուկ դեղաձևեր</p> <p>դ. Փոքր ծավալով հեղուկներ</p> <p>ե. Կարծր դեղաձևեր և իմպլանտներ</p> <p>զ. Ասեպտիկ պայմաններում արտադրված այլ արտադրանք</p>
	<p>2) <i>Վերջնական ստերիլիզացման ենթակա դեղաձևեր</i></p> <p>ա. Մեծ ծավալով հեղուկներ</p> <p>բ. Փափուկ դեղաձևեր</p> <p>գ. Փոքր ծավալով հեղուկներ</p> <p>դ. Կարծր դեղաձևեր և իմպլանտներ</p> <p>ե. Վերջնական ստերիլիզացման ենթակա այլ արտադրանք</p>
	<p>3) <i>Սերիայի բացթողման հավաստագրում</i></p>
2.	Ոչ ստերիլ արտադրանք
	<p>1) <i>Ոչ ստերիլ դեղաձևեր</i></p> <p>ա. Կարծր դեղապատիճներ</p> <p>բ. Փափուկ դեղապատիճներ</p> <p>գ. Ծամելու դեղաձևեր</p> <p>դ. Ներծծված մատրիցաներ</p> <p>ե. Հեղուկներ՝ արտաքին օգտագործման համար</p> <p>զ. Հեղուկներ՝ ներքին օգտագործման համար</p> <p>է. Բժշկական գազեր</p> <p>ը. Այլ կարծր դեղաձևեր</p> <p>թ. Ճնշման տակ գտնվող դեղաձևեր</p> <p>ժ. Ռադիոնուկլիդային գեներատորներ</p> <p>ժա. Փափուկ դեղաձևեր</p> <p>ժբ. Մոմիկներ</p> <p>ժգ. Դեղահատեր</p> <p>ժդ. Սպեղանիներ</p> <p>ժե. Բնորարումինալ դեղաձևեր</p> <p>ժզ. Անասնաբուժական խառնուրդներ</p> <p>ժէ. Ոչ ստերիլ այլ արտադրանք</p>
	<p>2) <i>Սերիայի բացթողման հավաստագրում</i></p>
3.	Կենսաբանական դեղեր

	<p>1) <i>Կենսաբանական դեղեր</i> ա. Արյան արտադրանքներ բ. Բմուռնաբանական արտադրանքներ գ. Բջջային թերապիայի արտադրանքներ դ. Գենային թերապիայի արտադրանքներ ե. Կենսատեխնոլոգիական արտադրանքներ զ. Մարդու կամ կենդանիների օրգաններից արտադրանքներ է. Այլ կենսաբանական դեղեր</p>
	<p>2) <i>Մերիայի բացթողման հավաստագրում</i> ա. Արյան արտադրանքներ բ. Բմուռնաբանական արտադրանքներ գ. Բջջային թերապիայի արտադրանքներ դ. Գենային թերապիայի արտադրանքներ ե. Կենսատեխնոլոգիական արտադրանքներ զ. Մարդու կամ կենդանիների օրգաններից արտադրանքներ է. Այլ կենսաբանական դեղեր</p>
4.	<p>Այլ արտադրանքներ կամ արտադրական գործունեություն</p>
	<p>1) <i>Արտադրություն</i> ա. Բուսական դեղեր բ. Հումեոպատիային դեղեր գ. Կենսաբանական ակտիվ էլանյութեր դ. Այլ</p>
	<p>2) <i>Ակտիվ դեղանյութերի (օժանդակ նյութերի) վերջնական արտադրանքի մանրէազերծում</i> ա. Ֆիլտրում բ. Չոր տաքացում գ. Խոնավ տաքացում դ. Քիմիական ե. Գամմա ճառագայթում զ. Էլեկտրոնային ճառագայթ է. Այլ</p>
5.	<p>Փաթեթավորում</p>
	<p>1) <i>Առաջնային փաթեթավորում</i> ա. Կարծր դեղապատիճներ բ. Փափուկ դեղապատիճներ գ. Ծամելու դեղաձևեր դ. Ներծծված մատրիցաներ ե. Հեղուկներ՝ արտաքին օգտագործման համար զ. Հեղուկներ՝ ներքին օգտագործման համար է. Բժշկական գազեր ը. Այլ կարծր դեղաձևեր թ. Ճնշման տակ գտնվող դեղեր ժ. Ռադիոնուկլիդային զենեքատորներ ժա. Փափուկ դեղաձևեր ժբ. Մումիկներ ժգ. Դեղահատեր ժդ. Սպեղանիներ ժե. Բնորարումինալ դեղաձևեր ժզ. Անասնաբուժական խառնուրդներ ժէ. Ոչ ստերիլ այլ արտադրանք</p>
	<p>2) <i>Երկրորդային փաթեթավորում</i></p>
6.	<p>Որակի հսկում</p>

1) Մանրէաբանական. ստերիլությունը
2) Մանրէաբանական. ոչ ստերիլությունը
3) Քիմիական/Ֆիզիկական
4) Կենսաբանական
7. Լրացուցիչ նշումներ

4. Առանձնացված արտադրության պայմաններ պահանջող արտադրանք՝ պենիցիլիններ, ցեֆալոսպորիններ, սուլֆոնամիդներ, հորմոնալ ակտիվությամբ նյութեր կամ այլ պոտենցիալ վտանգավոր ակտիվ բաղադրիչներ պարունակող դոզադիր և ազդեցիկ արտադրանքի (Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 25-ի N 1 որոշում) արտադրության դեպքում անհրաժեշտ է դեղերի արտադրության կանոնակարգի բոլոր կետերում (բացի սույն ցանկ կետի 2-րդ ենթակետից և 6-րդ կետից) և հատուկ նշումներում կատարել հավելյալ գրառումներ՝ նշելով համապատասխան խանութում:

Որակավորված անձը (անձինք) _____
 (անունը, ազգանունը, որակավորումը)

Տեղեկություններ դեղերի արտադրության իրականացման համար նախատեսված տարածքի և արտադրամասերի մասին հատակագիծը
 Հաստատում եմ ներկայացված տեղեկությունների իսկությունը

 (հայտատու իրավաբանական անձի անվանումը, տնօրենի անունը, ազգանունը, ստորագրությունը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, ստորագրությունը)

 (օրը, ամիսը, տարեթիվը)

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԱՐՏԱԴՐՎՈՂ ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ

Իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը

NN ը/կ	Արտադրվող դեղի անվանումը	Դեղաձևը	Դեղաչափը	Սերիան	Քանակը

 օրը, ամիսը, տարեթիվը

 (իրավաբանական անձի տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ ստորագրությունը)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

NN ը/կ	Տարածքի անվանումը	Մակերեսը (քառ. մետր)	Հագեցվածությունը

Ներկայացված տեղեկությունների իսկությունը
հաստատում եմ _____

(Իրավաբանական անձի տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ օրը, ամիսը, տարեթիվը

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2002 թվական
հունիսի 29-ի N 867 որոշման



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ Ա-ԴԱ-000000

Տրված՝ _____ 20 թվականին

Գործունեության տեսակը _____

Անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և բնակության վայրը _____

Գործունեության իրականացման վայրը _____

Գործողության ժամկետը՝ անժամկետ:

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարության
աշխատակազմի լիցենզավորման գործակալության պետ

_____ (ստորագրությունը)

Կ. Տ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ Կ-ԴԱ-000000

Տրված՝ _____ 20 թվականին
Գործունեության տեսակը _____

Իրավաբանական անձի անվանումը և գտնվելու վայրը _____

Գործունեության իրականացման վայրը _____

Գործողության ժամկետը՝ անժամկետ:

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարության
աշխատակազմի լիցենզավորման գործակալության պետ

_____ (ստորագրությունը)

Կ. Տ.

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2002 թվական
հունիսի 29-ի N 867 որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում իրավաբանական և կամ անհատ ձեռնարկատերերի կողմից լիցենզավորման ենթակա դեղատնային գործունեության իրականացման (այսուհետ՝ դեղատնային գործունեություն) լիցենզավորման կարգը՝ համաձայն «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետությու (այսուհետ՝ օրենք) պահանջների:

2. Հայաստանի Հանրապետությունում դեղատնային գործունեություն իրականացնելու համար լիցենզիան տալիս (մերժու լիցենզիայի գործողությունը կասեցնում կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում դադար է Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական լիազոր մարմինը՝ Հայաստանի Հանրապետ առողջապահության նախարարությունը (այսուհետ՝ լիազոր մարմին):

3. Դեղատոնային գործունեության իրականացման լիցենզիաները տրվում են բարդ ընթացակարգով, անժամկետ՝ օրենքով կարգով նախատեսված բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո 30 օրվա ընթացքում:

4. Լիցենզիա տալու համար գանձվում է տարեկան պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով:

5. Դեղատոնային գործունեության իրականացման դեպքում աշխատանքն իրականացնող համապատասխան մասնագետ գործունեության համար պահանջվում է մասնագիտական որակավորման ստուգում, որն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

6. Իրենց գործունեության իրականացման ընթացքում թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պարունակող դեղերի իրացուցման գործողում իրականացնող անհատ ձեռնարկատերերին կամ իրավաբանական անձանց դեղատոնային գործունեության իրակա լիցենզիա տրամադրելիս՝ լիցենզիայի «Գործունեության տեսակը» տողում, գործունեության տեսակը նշելուց բացի, կատարվի հետևյալ նշումը՝ «(ներառյալ թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պարունակող դեղերի իրացում և (կամ) բացթողում)»՝ ը՛ կոնկրետ ձևը:

7. Սույն կարգի համաձայն տրված լիցենզիաները գործում են միայն լիցենզիայում նշված վայրում:

8. Լիցենզիայի վերաձևակերպումը կամ գործողության կասեցումը կամ դադարեցումը կատարվում են օրենքով սահմանված կարգով:

II. ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՍԵՆԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

9. Հայտատուն դեղատոնային գործունեության լիցենզավորման համար օրենքի համաձայն ներկայացնում է՝

1) լիցենզիա ստանալու մասին հայտը՝ համաձայն NN 1 և 2 ձևերի, նշելով՝

ա. իրավաբանական անձը՝ անվանումը և կազմակերպական-իրավական ձևը, պետական գրանցման համարը, գտնվելու հեռախոսահամարը, գործունեության իրականացման վայրը և հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն և ինտերնետ պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում), լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը (որին հավակնում իրավաբանական անձը), թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պարունակող դեղերի իրացում և (կամ) բացթողում (ընդգծել) դեղատոնային գործունեության իրականացման ձևը (դեղատուն կամ դեղատոնային կրպակ), հարկ վճարողի հաշվառման համար, անհատ ձեռնարկատերը՝ անունը, ազգանունը, անձնագրի սերիան և համարը, պետական հաշվառման համարը, բնակ վայրը և հեռախոսահամարը, գործունեության իրականացման վայրը և հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն և ինտերնետային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում), լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը (հավակնում է անհատ ձեռնարկատերը), թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պարունակող դեղերի իրացում և (կամ) բացթ (ընդգծել), դեղատոնային գործունեության իրականացման ձևը (դեղատուն կամ դեղատոնային կրպակ), հարկ վճարողի հաշվառման համարը:

2) լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի իրավունքի պետական գրանցման վկայականի և իրավասու մարմնի կողմից տրված գործունեության համար նախատեսված ս հատակագծի պատճենները:

3) թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պարունակող դեղերի իրացման և (կամ) բացթողման դեպքում՝ տարածքների ազդանշանային համակարգով սարքավորված լինելու մասին տեղեկանքը:

4) տեղեկանք՝ համաձայն սույն կարգի N 3 ձևի, դեղատան կամ դեղատոնային կրպակի տարածքների և տեխնիկատեխնոլոգիական հագեցվածության մասին, որի պահանջները սահմանված են սույն կարգի III գլխում:

5) դեղատանը կամ դեղատոնային կրպակում աշխատանքն իրականացնող՝ համապատասխան որակավորում ունեցող ղեկավար և մասնագիտական կրթության վկայականի (դիպլոմ), հետբուհական կրթության և վերջին հինգ տարիների ընթացքում մասնագիտական վերապատրաստում անցնելու փաստը հավաստող վկայականների պատճենները, իսկ դեղագործի դեպքում համապատասխան որակավորում ունեցող դեղագործի միջին մասնագիտական կրթության փաստը հավաստող վկայականի և վերջին հինգ տարիների ընթացքում մասնագիտական վերապատրաստում անցնելու փաստը հավաստող վկայականների պատճենները:

6) դեղատանը կամ դեղատոնային կրպակում աշխատանքն իրականացնող՝ համապատասխան որակավորում ունեցող ղեկավար կամ դեղագործի հետ կնքված աշխատանքային պայմանագրի պատճենները:

7) տեղեկանք՝ դեղատան կամ դեղատոնային կրպակի աշխատանքային ժամերի մասին:

8) տեղեկանք՝ տեղեկատու դեղատուն կամ դեղատոնային կրպակ հանդիսանալու մասին (հանդիսանալու դեպքում):

9) տեղեկանք՝ շուրջօրյա դեղատուն կամ դեղատոնային կրպակ հանդիսանալու և դրա համար անհրաժեշտ մասնագետներ ապահովված լինելու մասին՝ համաձայն սույն կարգի N 4 ձևի (հանդիսանալու դեպքում):

10) տեղեկանք՝ կլինիկական ամբիոն կամ ուսումնական բազա հանդիսանալու մասին (հանդիսանալու դեպքում):

11) գործունեության իրականացման վայրում տեղադրված հսկիչ-դրամարկային մեքենայի գրանցման քարտի պատճենը

12) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վտանգավոր թափոնների վնասագերծման ոլորտում համապատասխան լիցենզիա ունեցող որևէ կազմակերպության հետ կնքված պայմանագրի պատճենը:

13) տեղեկանք՝ դեղատան կամ դեղատոնային կրպակի պահեստի հագեցվածության մասին՝ համաձայն սույն կարգի N 5 (առկայության դեպքում):

14) տարեկան պետական տուրքի վճարման անդորրագիրը:

10. Եթե ներկայացված հայտի և կից փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, ապա լիազոր մարմինն առաջարկում է 10- ժամկետում լրացնել այն:

11. Դեղատնային գործունեության լիցենզիա ստանալու համար ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկություննե՛լ համապատասխանությունը լիազոր մարմնի կողմից ուսումնասիրվում է տեղում և ուսումնասիրության արդյունքների հիման կազմվում է արձանագրություն:

III. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

12. Դեղատնային գործունեություն կարող են իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանվա՛լ լիցենզավորված և պետական հավատարմագրում ունեցող ուսումնական հաստատություն ավարտած ու օրենքով սահմանվա՛մ որակավորված և վերջին 5 տարվա ընթացքում լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով մասնագիտական վերապատրա՛ս անցած դեղագետները և դեղագործները:

13. Դեղատնային գործունեությունը դեղատան միջոցով իրականացնող իրավաբանական անձը և անհատ ձեռնարկատե՛ր ունենան առնվազն մեկ դեղագետ՝ բացառությամբ այն դեպքի, երբ անհատ ձեռնարկատերը համապատասխանում է սույն կ՛րոջ կետով դեղագետին ներակայացվող որակավորման պահանջներին:

14. Մեկից ավելի վայրերում դեղատնային գործունեությամբ զբաղվելու դեպքում յուրաքանչյուր դեղատանը և դեղատնա՛յ կրպակում գործունեություն իրականացնող դեղագետը (դեղագործը), իսկ մեկից ավելի լինելու դեպքում՝ դեղագետներից (դեղագործներից) մեկն իրավաբանական անձի գործադիր մարմնի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից նշանակվում է որս պատասխանատու անձ (պաշտոնատար անձ):

15. Սույն կարգի 14-րդ կետով նախատեսված անձը պատասխանատու է համապատասխան դեղատանը և դեղատնային կրպակում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ու գերատեսչական ակտերով դեղատնային գործունեության իրականացման համար սահմանված պարտադիր պայմանների ու պահանջների պահպանման համար:

16. Դեղերի պատրաստման համար դեղատունը պետք է ունենա հետևյալ անհրաժեշտ տեխնիկատեխնոլոգիական հագեցվածությունը՝ ասիստենտական սեղան, չորացնող-մանրէազերծող պահարան, մանրէասպան լամպ (բակտերիոցիդ լա թորած ջրի ստացման սարք, հեղուկ դեղերի լցաբաժանման սարք, հեղուկների չափիչ ամանեղեն, օդի խոնավությունը որոշո՛ւ տաքացուցիչ՝ ջերմակայունարարով, լաբորատոր ամանեղեն, հավանց, կշեռքներ և կշռաքարեր՝ դեղանյութի կշռման համա տեխնիկական լաբորատոր կշեռք, շտանգլասների հավաքածու, դեղերի և դեղանյութերի պտտարան-պահարաններ, սառնար երկաթե պահարան, սենյակային ջերմաչափ:

17. Դեղատան և դեղատնային կրպակի առևտրի սրահում պետք է լինեն ցուցադրման սեղաններ, ցուցապահարաններ, վ՛ պահարաններ, վաճառասեղան, սառնարան, ջերմաչափ, հեռախոս:

18. Դեղատանը և դեղատնային կրպակում տեխնիկատեխնոլոգիական միջոցներով պետք է ապահովվի դեղերի պահպա՛մ համար անհրաժեշտ ջերմային ռեժիմ:

19. Սյն դեղատները և դեղատնային կրպակները, որոնք իրացնում և (կամ) բաց են թողնում թմրամիջոցներ կամ հոգեմե՛ս պարունակող դեղեր, պետք է ունենան թմրամիջոցների ու հոգեմետ նյութերի պահպանման համար պահեստ (բունկեր) կամ ՝ ամրացված չիբկիզվող պահարան: Պահեստը պետք է ունենա խոնավաչափ և սարքավորված լինի ազդանշանային համակար ձայնային կամ լուսային ազդանշանը պահպանության դիտակետին միացնելով կամ շենքի արտաքին մասին ամրացնելով: Ազդանշանային սարքավորումների էլեկտրասնուցման համակարգը պետք է ունենա պահեստային էլեկտրասնուցման աղբյու՛ր:

20. Դեղատան պահեստը և դեղատնային կրպակի պահեստը (առկայության դեպքում) դեղերի պահպանման համար անձ ջերմային ռեժիմ ապահովելու նպատակով պետք է կահավորված լինեն փակ պահարաններով, վիրակապական և ռետինե ապրանքների համար պետք է ունենա առանձին պահարաններ ու խոնավաչափ:

21. Դեղատան պահեստում և դեղատնային կրպակի պահեստում (առկայության դեպքում) տեխնիկատեխնոլոգիական մ՛ պետք է ապահովվի դեղերի պահպանման համար անհրաժեշտ ջերմային ռեժիմ:

22. Դեղատան և դեղատնային կրպակի գրասենյակում, հանգստի սենյակում պետք է տեղադրված լինեն գրասեղան, աթ՛ հագուստի պահարան (անձնական և աշխատանքային հագուստը պետք է միմյանցից մեկուսացված լինեն), թախտ կամ բազ՛

23. Դեղատանը և դեղատնային կրպակում դեղագետների ու դեղագործների աշխատանքները կազմակերպվում են Հայա՛ Հանրապետության աշխատանքային օրենսգրքին համապատասխան:

24. Հայաստանի Հանրապետությունում դեղատները և դեղատնային կրպակները չեն կարող տեղակայվել նկուղային կամ կիսանկուղային հարկերում: Դեղատան և դեղատնային կրպակի տարածքների թույլատրելի նվազագույն չափերն են՝

- 1) դեղատուն՝
 - ա. առևտրի սրահ, սպասասրահ՝ 18 քառ. մետր,
 - բ. դեղերի ստերիլիզացման սենյակ՝ 10 քառ. մետր,
 - գ. դեղատոմսերի ընդունման և պատրաստված դեղերի բացթողման բաժին՝ 7 քառ. մետր,
 - դ. ասիստենտական սենյակ՝ 8 քառ. մետր,
 - ե. փաթեթավորման սենյակ՝ լվացարանով՝ 4 քառ. մետր,
 - զ. ստերիլ դեղերի պատրաստման սենյակ՝ 10 քառ. մետր,
 - է. ամանեղենի մանրէազերծման սենյակ՝ 6 քառ. մետր,
 - ը. պահեստ՝ 15 քառ. մետր,
 - թ. շշերի պահպանման սենյակ՝ 6 քառ. մետր,

- ժ. դեղափոշիների պահպանման սենյակ՝ 8 քառ. մետր,
- ժա. գրասենյակ, հանգստի սենյակ՝ 8 քառ. մետր,
- ժբ. տնտեսական սպրանքների պահպանման սենյակ՝ 2 քառ. մետր,
- ժգ. սանհանգույց՝ լվացարանով՝ 2 քառ. մետր.

2) էթե հայտատուն լիցենզիա ստանալու մասին հայտում նշում է, որ չի պատրաստելու ստերիլ դեղեր, ապա նշված տարածքներից հանվում են դեղերի ստերիլիզացման և ստերիլ դեղերի պատրաստման սենյակների համար նախատեսված տարածքները.

- 3) դեղատնային կրպակ՝
- ա. առևտրի սրահ, սպասասրահ՝ 18 քառ. մետր,
- բ. գրասենյակ, հանգստի սենյակ՝ 8 քառ. մետր,
- գ. սանհանգույց՝ լվացարանով՝ 2 քառ. մետր:

25. Դեղատունը կամ դեղատնային կրպակը պետք է ունենա համապատասխան շենքի կամ շինության ընդհանուր մուտք առանձնացված մուտք:

26. Հասարակական շենքերի (առևտրի կենտրոններ, սուպերմարկետներ և այլն), բժշկական հաստատությունների, վարչաշենքերի, մետրոների, օդանավակայանների, երկաթուղային և ավտոկայարանների սպասասրահներում տեղադրվող դեղատն կրպակների համար առանձին սպասասրահ ու սանհանգույց, ինչպես նաև համապատասխան շենքի կամ շինության ընդհան մուտքից առանձնացված մուտք ունենալը պարտադիր չէ, եթե դրանցում կան ընդհանուր օգտագործման սանհանգույց և սպս դեղատնային կրպակները շրջապատից մեկուսացվում են առնվազն ապակյա պատով և ունեն առևտրի համար նախատեսվա պատուհան: Այս դեպքերում առևտրի սրահի նվազագույն թույլատրելի չափը սահմանվում է 8 քառ. մետր:

27. Սույն կարգով նախատեսված դեղատան կամ դեղատնային կրպակի համար հատկացված տարածքները պետք է տեղ լինեն միևնույն շինության կամ շենքի տարածքում և ունենան գործառնական կապ:

28. Սույն կարգի իմաստով դեղատան կամ դեղատնային կրպակի տարածքներն ունեն գործառնական կապ, եթե գտնվում միևնույն շենքի կամ շինության տարածքում, ունեն մեկ ընդհանուր մուտք, ընդ որում՝ տարբեր հարկերում լինելու դեպքում տեղակայված են իրար անմիջապես հաջորդող հարկերում:

29. Դեղատան կամ դեղատնային կրպակի առևտրի սրահի սպասասրահի, գրասենյակի տարածքները կարող են տարանջ լինել շարժական պատերով՝ բացառությամբ սանհանգույցի:

30. Դեղատան և դեղատնային կրպակի սպառողների համար տեսանելի վայրում պետք է փակցված լինեն տեղեկատու դեղատների հեռախոսահամարները, սպասարկող դեղագետի կամ դեղագործի անունը, ազգանունը:

31. Դեղատանը և դեղատնային կրպակում թղթային կամ էլեկտրոնային տարբերակով պետք է առկա լինեն դեղերի պետ գրանցամատյանը, հիմնական դեղերի ցանկը, դեղագրքեր և դեղագիտական-տեղեկատվական ձեռնարկները, ինչպես նաև մլ յուրաքանչյուր ամսվա տասներորդ օրը թարմացվող, առանց դեղատուսի բաց թողնվող դեղերի ցանկը:

32. Տեղեկատու դեղատանը և դեղատնային կրպակում պետք է լինի տվյալ մարզի, իսկ Երևան քաղաքի դեպքում՝ քաղա տարածքում գործող դեղատների և դեղատնային կրպակների հեռախոսահամարներ պարունակող էլեկտրոնային բազա:

33. Սույն կարգի իմաստով տեղեկատու է համարվում սպառողի կողմից փնտրվող դեղի առկայության մասին տեղեկաս (ներառյալ՝ տեղեկատվություն այլ դեղատներում կամ դեղատնային կրպակներում դրա առկայության, դրանց աշխատանքս ժամերի, կոնտակտային տվյալների վերաբերյալ) ստացման, պահպանման և տրամադրման համար պարբերաբար թարմացս ինչպես նաև արագ փնտրելու հնարավորություն ընձեռող տեղեկատվական բազա ունեցող և այդ տեղեկատվությունը տրամս դեղատունը կամ դեղատնային կրպակը, որն այդ ծառայության համար ունի հատուկ նախատեսված հեռախոսահամար:

34. Դեղատնից կամ դեղատնային կրպակից դեղերը դեղատուսով բաց են թողնվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

35. Դեղատանը և դեղատնային կրպակում սույն կարգի 14-րդ կետով նախատեսված պատասխանատու անձի (պաշտոնս անձ) կողմից պետք է վարվի բժշկական թափոնների հաշվառում՝ լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով:

36. Դեղատունը և դեղատնային կրպակը պետք է ունենան բժշկական թափոնների ժամանակավոր պահպանման համար նախատեսված պարկեր կամ բեռնարկղեր, որոնք պետք է պահվեն առևտրի սրահից և սպասասրահից դուրս դեղատան կամ դեղատնային կրպակի այլ տարածքներում:

37. Դեղատանը և դեղատնային կրպակում դեղերը պետք է պահվեն ըստ ֆարմակոլոգիական խմբերի՝ դրանց ուղեկցող փաստաթղթերում սահմանված դեղերի պահպանման համար անհրաժեշտ ջերմային ռեժիմում և համապատասխան լուսավ ու խոնավության պայմաններում:

38. Դեղատունը և դեղատնային կրպակն արտաքին հատվածից պետք է ձևավորված լինեն կանաչ գույնի «Դեղատուն» կ «Դեղատնային կրպակ» վերտառությամբ և խաչի նշանով՝ տեսանելի վայրում փակցված ցուցանակով:

39. Դեղատունը և դեղատնային կրպակը պետք է ապահովված լինեն առաջին բժշկական օգնության պարագաներով, որս հաստատվում է լիազոր մարմնի կողմից:

40. «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ դեղերի առ թույլատրվում է իրականացնել միայն դեղատներում և դեղատնային կրպակներում: Դեղերի առաքումն արգելվում է:

41. Դեղատան կամ դեղատնային կրպակի առևտրի՝ դեղատնային գործունեության իրականացման լիցենզիայի պատճեն փակցվում են սրահի կամ սպասասրահի՝ սպառողների համար տեսանելի հատվածում:

42. Դեղատնից և դեղատնային կրպակից կարող են վաճառվել ու բաց թողնվել միայն Հայաստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված և պիտանիության ժամկետի մեջ գտնվող :

43. Դեղատանը կամ դեղատնային կրպակում մանրածախ վաճառքի՝ կանխիկ դրամով իրականացվող հաշվարկների բոլոր դեպքերում կիրառվում են հսկիչ-դրամարկղային մեքենաներ:

44. Լիցենզավորված անձի կողմից հայտին կից ներկայացված՝ դեղատնային գործունեության համար սահմանված պարտապահանջներին և պայմաններին համապատասխանությունը հավաստող փաստաթղթերում առկա տեղեկությունների փոփոխությունը (ներառյալ համապատասխան որակավորում ունեցող դեղագետի կամ դեղագործի, հազվեցվածության փոփոխման) լիցենզավորված անձը 15 օրվա ընթացքում լիազոր մարմնին հայտնում է իրականացված փոփոխության մասին՝ կցելով համապատասխան փաստաթղթերը:

III. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

45. Լիցենզիա ստանալու մասին հայտը մերժվում է, եթե՝

- 1) ներկայացված հայտը և կից փաստաթղթերը թերի են և չեն լրացվել սույն կարգի 10-րդ կետով նախատեսված ժամկետ դրանցում առկա են ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված տեղեկություններ կամ,
 - 2) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքի, այլ իրավական ակտերի և սույն կարգի պահանջներին
 - 3) իրավաբանական անձն օրենքի կամ իր կանոնադրության համաձայն իրավունք չունի զբաղվելու հայցվող լիցենզավորման ենթակա գործունեությամբ կամ,
 - 4) դեղատնային գործունեության իրականացման համար նախատեսված տարածքը սեփականության, վարձակալության, ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով չի պատկանում հայտատուին կամ,
 - 5) սույն կարգի 12-29-րդ, 31-րդ կետերով սահմանված լիցենզավորման պարտադիր պահանջներին և պայմաններին չհամապատասխանելու դեպքում կամ,
 - 6) օրենքով և սույն կարգով նախատեսված այլ դեպքերում:
46. Լիցենզիա ստանալու հայտը մերժվելու մասին որոշումն ընդունվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում առկա հայտատուին:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարար
լիցենզավորման հանձնաժողովի և

(անունը, ազգանունը)

Հ Ա Յ Տ

ԼԻՑԵՆԶԻԱ ՄՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Իրավաբանական անձի անվանումը և կազմակերպական-իրավական ձևը _____

2. Իրավաբանական անձի պետական գրանցման համարը _____

3. Իրավաբանական անձի գտնվելու վայրը և հեռախոսահամարը _____

4. Իրավաբանական անձի գործունեության իրականացման վայրը և հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն և ինտերնետային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում) _____

5. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը (որին հավակնում է իրավաբանական անձը), թմրամիջոցների կամ հոգեմետ նյութեր պարունակող դեղերի իրացում և (կամ) բացթողում (ընդգծել _____

6. Դեղատնային գործունեության իրականացման ձևը _____

7. Հարկ վճարողի հաշվառման համարը _____

8. Կից ներկայացվող փաստաթղթերը՝

1) լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի իրավունքի պետական գրանցման վկայականի և իրավասու մարմնի կողմից տրված գործունեության համար նախատեսված ս հատակագծի պատճենները.

2) թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պարունակող դեղերի իրացման և (կամ) բացթողման դեպքում՝ տարածքների ազդանշանային համակարգով սարքավորված լինելու մասին տեղեկանքը.

- 3) տեղեկանք՝ դեղատան կամ դեղատնային կրպակի տարածքների և տեխնիկատեխնոլոգիական հագեցվածություն մասը
- 4) դեղատանը կամ դեղատնային կրպակում (ընդգծել) աշխատանքն իրականացնող՝ համապատասխան որակավորում : դեղագետի բարձրագույն մասնագիտական կրթության վկայականի (դիպլոմ), հետբուհական կրթության և վերջին հինգ տարւ ընթացքում մասնագիտական վերապատրաստում անցնելու փաստը հավաստող վկայականների պատճենները, իսկ դեղագոր դեպքում՝ (ընդգծել) համապատասխան որակավորում ունեցող դեղագործի մասնագիտական կրթության փաստը հավաստող վկայականի (դիպլոմի) պատճենը և վերջին հինգ տարվա ընթացքում մասնագիտական վերապատրաստում անցնելու փաստը հավաստող վկայականների պատճենները.
- 5) դեղատանը կամ դեղատնային կրպակում աշխատանքն իրականացնող՝ համապատասխան որակավորում ունեցող դի կամ դեղագործի (ընդգծել) հետ կնքված աշխատանքային պայմանագրերի պատճենները.
- 6) տեղեկանք՝ դեղատան կամ դեղատնային կրպակի (ընդգծել) աշխատանքային ժամերի մասին.
- 7) տեղեկանք՝ տեղեկատու դեղատուն կամ դեղատնային կրպակ հանդիսանալու մասին (հանդիսանալու դեպքում).
- 8) տեղեկանք՝ շուրջօրյա դեղատուն կամ դեղատնային կրպակ հանդիսանալու և դրա համար անհրաժեշտ մասնագետնե ապահովված լինելու մասին (հանդիսանալու դեպքում).
- 9) տեղեկանք՝ կլինիկական ամբիոն կամ ուսումնական բազա հանդիսանալու մասին (հանդիսանալու դեպքում).
- 10) գործունեության իրականացման վայրում տեղադրված հսկիչ-դրամարկդային մեքենայի գրանցման քարտի պատճենը
- 11) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փտանգավոր թափոնների վնասագերծման ոլո համապատասխան լիցենզիա ունեցող որևէ կազմակերպության հետ կնքված պայմանագրի պատճենը.
- 12) տեղեկանք՝ դեղատան կամ դեղատնային կրպակի պահեստի հագեցվածության մասին.
- 13) տարեկան պետական տուրքի վճարման անդորրագիրը:

Ներկայացված տեղեկությունների իսկությունը
 հաստատում եմ _____
 (իրավաբանական անձի տնօրենի ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ օրը, ամիսը, տարեթիվը

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախար
 լիցենզավորման հանձնաժողովի և

 (անունը, ազգանունը)

Հ Ա Յ Տ
Լ Ի Ց Ե Ն Չ Ի Ա Ս Տ Ա Ն Ա Լ Ո Ւ Մ Ա Ս Ի Ն

- 1. Անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը _____
- 2. Անձնագրի սերիան և համարը _____
- 3. Անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը _____
- 4. Բնակության վայրը և հեռախոսահամարը _____

5. Գործունեության իրականացման վայրը և հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն և ինտերնետային պաշտ կայքի հասցեն (առկայության դեպքում)

6. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը (որին հավակնում է անհատ ձեռնարկատերը), թմրամիջոցների կս հոգեմետ նյութեր պարունակող դեղերի իրացում և (կամ) բացթողում (ընդգծել)

- 7. Դեղատնային գործունեության իրականացման ձևը _____
- 8. Հարկ վճարողի հաշվառման համարը _____
- 9. Կից ներկայացվող փաստաթղթերը՝

1) լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի իրավունքի պետական գրանցման վկայականի և իրավասու մարմնի կողմից տրված գործունեության համար նախատեսված ս հատակագծի պատճենները.

2) թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պարունակող դեղերի իրացման և (կամ) բացթողման դեպքում՝ տեղեկանք տա ազդանշանային համակարգով սարքավորված լինելու մասին (ընդգծել):

3) տեղեկանք՝ դեղատան կամ դեղատնային կրպակի (ընդգծել) տարածքների և տեխնիկատեխնոլոգիական հագեցվածույ մասին:

4) դեղատանը կամ դեղատնային կրպակում աշխատանքն իրականացնող համապատասխան որակավորում ունեցող դե բարձրագույն մասնագիտական կրթության վկայականի (դիպլոմ), հետբուհական կրթության և վերջին հինգ տարվա ընթացք մասնագիտական վերապատրաստում անցնելու փաստը հավաստող վկայականների պատճենները, իսկ դեղագործի դեպքում համապատասխան որակավորում ունեցող դեղագործի միջին մասնագիտական կրթության փաստը հավաստող վկայականի և վերջին հինգ տարվա ընթացքում մասնագիտական վերապատրաստում անցնելու փաստը հավաստող վկայականների պատճենները:

5) դեղատանը կամ դեղատնային կրպակում աշխատանքն իրականացնող համապատասխան որակավորում ունեցող դե կամ դեղագործի (ընդգծել) հետ կնքված աշխատանքային պայմանագրի պատճենը:

6) տեղեկանք՝ դեղատան կամ դեղատնային կրպակի (ընդգծել) աշխատանքային ժամերի մասին:

7) տեղեկանք՝ տեղեկատու դեղատուն կամ դեղատնային կրպակ հանդիսանալու մասին (հանդիսանալու դեպքում):

8) տեղեկանք՝ շուրջօրյա դեղատուն կամ դեղատնային կրպակ հանդիսանալու և դրա համար անրաժեշտ մասնագետներ ապահովված լինելու մասին (հանդիսանալու դեպքում):

9) տեղեկանք՝ կլինիկական ամբիոն կամ ուսումնական բազա հանդիսանալու մասին (հանդիսանալու դեպքում):

10) գործունեության իրականացման վայրում տեղադրված հսկիչ-դրամարկդային մեքենայի գրանցման քարտի պատճենը:

11) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վտանգավոր թափոնների վնասագերծման ոլր համապատասխան լիցենզիա ունեցող որևէ կազմակերպության հետ կնքված պայմանագրի պատճենները:

12) տեղեկանք՝ դեղատան կամ դեղատնային կրպակի պահեստի հագեցվածության մասին:

13) տարեկան պետական տուրքի վճարման անդորրագիրը:

Ներկայացված տեղեկությունների իսկությունը
հաստատում եմ _____
(անհատ ձեռնարկատիրոջ ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ օրը, ամիսը, տարեթիվը

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԴԵՂԱՏԱՆ ԿԱՍ ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ԿՐՊԱԿԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

NN ը/կ	Տարածքի անվանումը	Մակերեսը (քառ. մետր)	Հագեցվածությունը

Ներկայացված տեղեկությունների իսկությունը
հաստատում եմ _____
(իրավաբանական անձի տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ օրը, ամիսը, տարեթիվը

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՇՈՒՐՋՕՐՅԱ ԴԵՂԱՏՈՒՆ ԿԱՍ ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ԿՐՊԱԿ ԶԱՆԴԻՍԱՆԱԼՈՒ ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտատու իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը

NN ը/կ	Դեղատանը կամ դեղատնային կրպակում հերթափոխի ժամերը	Դեղագործների թիվը	Դեղագետների թիվը

_____ օրը, ամիսը, տարեթիվը

_____ (իրավաբանական անձի տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ ստորագրությունը)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Դ Ե Ղ Ա Տ Ա Ն Կ Ա Ս Դ Ե Ղ Ա Տ Ն Ա Յ Ի Ն Կ Բ Պ Ա Կ Ի Պ Ա Հ Ե Ս Տ Ի Հ Ա Գ Ե Յ Վ Ա Ծ Ո Ւ Թ Յ Ա Ն Մ Ա Ս Ի Ն

Հայտատու իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը

Պահեստի տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է (քառ. մետր) _____

NN ը/կ	Հագեցվածությունը	Քանակը
1.	Խոնավաչափ	
2.	Փակ պահարաններ	
3.	Վիրակապական և ռետինե ապրանքների համար առանձին պահարաններ	

_____ օրը, ամիսը, տարեթիվը

_____ (իրավաբանական անձի տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ ստորագրությունը)

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2002 թվական
հունիսի 29-ի N 867 որոշման



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

ԼԻՑԵՆԶԻԱ Կ-ԴԳ-000000

Տրված՝ _____ 20 թվականին

Գործունեության տեսակը _____

Իրավաբանական անձի անվանումը և գտնվելու վայրը _____

Գործունեության իրականացման վայրը _____

Գործողության ժամկետը՝ անժամկետ:

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարության
աշխատակազմի լիցենզավորման գործակալության պետ

_____ (ստորագրությունը)

Կ. Տ.



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

ԼԻՑԵՆԶԻԱ Ա-ԴԳ-000000

Տրված՝ _____ 20 թվականին

Գործունեության տեսակը _____

Անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և բնակության վայրը _____

Գործունեության իրականացման վայրը _____

Գործողության ժամկետը՝ անժամկետ:

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարության
աշխատակազմի լիցենզավորման գործակալության պետ

(ստորագրությունը)

Կ. Տ.

Հավելված N 5
ՀՀ կառավարության 2002 թվական
հունիսի 29-ի N 867 որոշման

Կ Ա Ր Գ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏ
ԿՈՂՄԻՑ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության և սպասարկման իրականացման (այսուհետ՝ բժշկական օգնություն սպասարկում) լիցենզավորման կարգը՝ համաձայն «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսու օրենք) պահանջներին:

2. Հայաստանի Հանրապետությունում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու համար լիցենզիան տալիս է, լիցենզիայի գործողությունը կասեցնում կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում դադարեցնում է Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական լիազոր մարմինը՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը (այսուհետ՝ լիազոր մարմին):

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում մասնագիտական գործունեության լիցենզավորման ենթակա են կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից իրականացվող հիվանդանոցային և արտահիվանդանոցային բժշկական օգնությունն ու սպասարկումը:

4. Բժշկական օգնության և սպասարկման իրականացման համար լիցենզիաները տրվում են բարդ ընթացակարգով, անժամ օրենքով և սույն կարգով նախատեսված բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ 30 օրվա ընթացքում:

5. Լիցենզիա տալու համար գանձվում է տարեկան պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով:

6. Բժշկական օգնության և սպասարկման իրականացման դեպքում աշխատանքն իրականացնող համապատասխան մասնագետների գործունեության համար պահանջվում է մասնագիտական որակավորման ստուգում, որն իրականացվում է օ սահմանված կարգով:

7. Իրենց գործունեության իրականացման ընթացքում թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պարունակող դեղերի բացթի իրականացնող կամ կիրառող անհատ ձեռնարկատերերին կամ կազմակերպություններին բժշկական օգնության և սպասարկ իրականացման լիցենզիա տրամադրելիս՝ լիցենզիայի «Գործունեության տեսակը» տողում, գործունեության տեսակը նշելուց կատարվում է հետևյալ նշումը. «(ներառյալ թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պարունակող դեղերի բացթողում և (կամ) կիրառում)»՝ ընդգծելով կոնկրետ ձևը:

8. Սույն կարգի համաձայն տրված լիցենզիաները գործում են միայն լիցենզիայում նշված վայրում:

9. Լիցենզիայի վերաձևակերպումը, գործողության կասեցումը և դադարեցումը կատարվում են օրենքով սահմանված կար

II. ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

10. Բժշկական օգնության և սպասարկման իրականացման լիցենզիա ստանալու համար հայտատուն լիազոր մարմին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) լիցենզիա ստանալու մասին հայտը՝ համաձայն NN 1 և 2 ձևերի, նշելով՝

ա. կազմակերպությունը՝ անվանումը և կազմակերպական-իրավական ձևը, պետական գրանցման համարը, գտնվելու վս հեռախոսահամարը, գործունեության իրականացման վայրը և հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն և ինտերնետ

պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում), լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը (որին հավակնում կազմակերպությունը), հարկ վճարողի հաշվառման համարը,

բ. անհատ ձեռնարկատերը՝ անունը, ազգանունը, անձնագրի սերիան և համարը, պետական հաշվառման համարը, բնավայրն ու հեռախոսահամարը, գործունեության իրականացման վայրը և հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն և ինտերնետային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում), լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը (հավակնում է անհատ ձեռնարկատերը), հարկ վճարողի հաշվառման համարը.

2) տեղեկանք՝ հայցվող բժշկական օգնության և սպասարկման տեսակների մասին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 27-ի N 276-Ն որոշման՝ համաձայն սույն կարգի N 3 ձևի.

3) տեղեկանք՝ առողջապահության բնագավառում տվյալ գործունեության համար անհրաժեշտ համապատասխան մասնագիտական կրթություն ունեցող մասնագետներով (համապատասխան բարձրագույն մասնագիտական կրթության վկայ (դիպլոմ), հետբուհական կրթության վկայականների պատճենները) ապահովվածության մասին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N 1936-Ն և (կամ) Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 29-ի N 1275-Ն որոշումներին համապատասխան.

4) բժշկական ավագ, միջին և կրտսեր մասնագետների հետ կնքված աշխատանքային պայմանագրերի պատճենները.

5) տեղեկանք՝ բժշկական սարքավորումներով ապահովվածության մասին՝ համաձայն սույն կարգի N 4 ձևի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N 1936-Ն և (կամ) Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 29-ի N 1275-Ն որոշումներին համապատասխան.

6) տեղեկանք՝ բժշկական հաստատության կառուցվածքային ստորաբաժանումների մասին՝ համաձայն սույն կարգի N 5

7) լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատու իրավունքի պետական գրանցման վկայականի և իրավասու մարմնի կողմից տրված գործունեության համար նախատեսված ս հատակագծի պատճենները.

8) հիվանդանոցային բժշկական հաստատությունների դեպքում՝ տեղեկանք շուրջօրյա հերթապահության իրականացման համար անհրաժեշտ բժշկական կադրերով ապահովված լինելու մասին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2 թվականի դեկտեմբերի 5-ի N 1936-Ն որոշմանը համապատասխան՝ համաձայն սույն կարգի N 6 ձևի.

9) գործունեության իրականացման վայրում տեղադրված հսկիչ-դրամարկդային մեքենայի գրանցման քարտի պատճենը.

10) լիազոր մարմնի կողմից հաստատված ցանկում ներառված բժշկական սարքավորումների տեխնիկական փաստաթղթեր պատճենները.

11) հիվանդանոցային բժշկական հաստատությունների դեպքում՝ տեղեկանք համապատասխան բաժանմունքում լիցենզ բժշկական օգնության և սպասարկման իրականացման համար առկա մահճակալների թվի մասին.

12) թվրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պարունակող դեղերը բաց թողնելու և (կամ) կիրառելու դեպքում՝ տեղեկանք տարածքների ազդանշանային համակարգով սարքավորված լինելու մասին.

13) տեղեկանք՝ կլինիկական ամբիոն կամ ուսումնական բազա հանդիսանալու մասին (հանդիսանալու դեպքում).

14) տեղեկանք՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատության պահեստի հազեցվածության մաս համաձայն սույն կարգի N 7 ձևի (առկայության դեպքում).

15) տարեկան պետական տուրքի վճարման անդորրագիրը:

11. Եթե ներկայացված հայտի և կից փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, ապա լիազոր մարմինն առաջարկում է 10-ժամկետում լրացնել այն:

12. Բժշկական օգնության և սպասարկման իրականացման լիցենզիա ստանալու համար ներկայացված փաստաթղթերում տեղեկությունների համապատասխանությունը լիազոր մարմնի կողմից ուսումնասիրվում է տեղում և ուսումնասիրության արդյունքների հիման վրա կազմվում է արձանագրություն:

III. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

13. Բժշկական օգնության և սպասարկման իրականացման լիցենզիայի պատճենները փակցվում են բժշկական հաստատ սպառողների համար տեսանելի հատվածում:

14. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը պետք է ապահովեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ բժշկական հաստատություններին ներկայացվող կառուցվածք մասնագիտական, ինչպես նաև բժշկական սարքավորումներով ապահովվածությանը ներկայացվող պայմաններին և պահանջ շինարարական նորմերին համապատասխանությունը:

15. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող այն կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը, իրենց գործունեության ընթացքում կիրառում և (կամ) բաց են թողում թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պարունակող դե պետք է ունենան թմրամիջոցների և հոգեմետ նյութերի պահպանման համար պահեստ (բունկեր) կամ հատակին ամրացված չհրկիզվող պահարան: Պահեստը պետք է ունենա խոնավաչափ և սարքավորված լինի ազդանշանային համակարգով՝ ձայնա լուսային ազդանշանը պահպանության դիտակետին միացնելով կամ շենքի արտաքին մասին ամրացնելով: Ազդանշանային սարքավորումների էլեկտրասնուցման համակարգը պետք է ունենա պահեստային էլեկտրասնուցման աղբյուր:

16. Սույն կարգի 15-րդ կետում նշված պահեստը (առկայության դեպքում) դեղերի պահպանման պատշաճ պայմաններ ապահովելու նպատակով պետք է կահավորված լինեն փակ պահարաններով, վիրակապական և ռետինե սպրանքների համա ունենա առանձին պահարաններ ու խոնավաչափ: Պահեստում համապատասխան տեխնիկատեխնոլոգիական հազեցվածությ

պետք է ապահովվի դեղերի պահպանման համար անհրաժեշտ ջերմային ռեժիմ:

17. Բժշկական սարքավորումների օգտագործման ժամկետը չպետք է գերազանցի լիազոր մարմնի կողմից՝ առանձին բժշկական սարքավորումների համար սահմանված ժամկետները:

18. Հայաստանի Հանրապետությունում կազմակերպության ու անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության սպասարկման ծառայություններ մատուցելիս՝ կանխիկ դրամով իրականացվող հաշվարկների բոլոր դեպքերում կիրառվում է դրամարկղային մեքենաներ:

19. Լիցենզավորված անձի կողմից հայտին կից ներկայացված՝ բժշկական օգնության և սպասարկման համար սահմանվ պարտադիր պահանջներին և պայմաններին համապատասխանությունը հավաստող փաստաթղթերում առկա տեղեկություն փոփոխման դեպքում լիցենզավորված անձը 15 օրվա ընթացքում լիազոր մարմնին հայտնում է իրականացված փոփոխության կցելով համապատասխան փաստաթղթերը:

IV. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

20. Լիցենզիա ստանալու մասին հայտը մերժվում է, եթե՝

1) ներկայացված հայտը և կից փաստաթղթերը թերի են և չեն լրացվել սույն կարգի 11-րդ կետով նախատեսված ժամկետ դրանցում առկա են ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված տեղեկություններ կամ,

2) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքի, այլ իրավական ակտերի և սույն կարգի պահանջներ:

3) կազմակերպությունն օրենքի կամ իր կանոնադրության համաձայն իրավունք չունի զբաղվելու հայցվող լիցենզավորման ենթակա գործունեությամբ կամ,

4) բժշկական օգնության և սպասարկման իրականացման համար նախատեսված տարածքը սեփականության, վարձակա ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով չի պատկանում հայտատուին կամ,

5) սույն կարգի 14-17-րդ կետերով սահմանված լիցենզավորման պարտադիր պահանջներին և պայմաններին չհամապատասխանելու դեպքում կամ,

6) բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող՝ համապատասխան որակավորում ունեցող մասնագետի բացակայության դեպքում կամ,

7) տարեկան պետական տուրքը չվճարելու դեպքում կամ,

8) օրենքով և սույն կարգով նախատեսված այլ դեպքերում:

21. Լիցենզիա ստանալու հայտը մերժվելու մասին որոշումն ընդունվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում առ հայտատուին:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարար
լիցենզավորման հանձնաժողովի ն

(անունը, ազգանունը)

Հ Ա Յ Տ

ԼԻՑԵՆԶԻԱ ՄՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Կազմակերպության անվանումը և կազմակերպական-իրավական ձևը _____

2. Կազմակերպության պետական գրանցման համարը _____

3. Կազմակերպության գտնվելու վայրը և հեռախոսահամարը _____

4. Կազմակերպության գործունեության իրականացման վայրը և հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն և ինտերնետային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում) _____

5. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը (որին հավակնում է կազմակերպությունը) _____

6. Հարկ վճարողի հաշվառման համարը _____

7. Կից ներկայացվող փաստաթղթերը՝

1) տեղեկանք՝ հայցվող բժշկական օգնության և սպասարկման տեսակների վերաբերյալ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 27-ի N 276-Ն որոշման.

2) տեղեկանք՝ առողջապահության բնագավառում տվյալ գործունեության համար անհրաժեշտ համապատասխան մասնագիտական կրթություն ունեցող մասնագետներով ապահովվածության մասին.

3) բժշկական ավագ, միջին և կրտսեր մասնագետների հետ կնքված աշխատանքային պայմանագրերի պատճենները.

4) տեղեկանք՝ բժշկական սարքավորումներով ապահովվածության մասին՝ Հայաստանի Հանրապետության կառավարու 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N 1936-Ն և (կամ) Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի N 1275-Ն որոշումներին համապատասխան.

5) տեղեկանք՝ բժշկական հաստատության կառուցվածքային ստորաբաժանումների մասին.

6) լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի իրավունքի պետական գրանցման վկայականի և իրավասու մարմնի կողմից տրված գործունեության համար նախատեսված ս հատակագծի պատճենները.

7) հիվանդանոցային բժշկական հաստատությունների դեպքում՝ տեղեկանք շուրջօրյա հերթապահության իրականացման համար անհրաժեշտ բժշկական կադրերով ապահովված լինելու մասին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2 թվականի դեկտեմբերի 5-ի N 1936-Ն որոշմանը համապատասխան.

8) հարկային մարմնի կողմից տրված տեղեկանք՝ գործունեության իրականացման վայրում հսկիչ-դրամարկղային մեքենա գրանցված լինելու մասին.

9) լիազոր մարմնի կողմից սահմանված բժշկական սարքավորումների տեխնիկական փաստաթղթերի պատճենները.

10) հիվանդանոցային բժշկական հաստատությունների դեպքում՝ տեղեկանք համապատասխան բաժանմունքում լիցենզ բժշկական օգնության և սպասարկման իրականացման համար առկա մահճակալների թվի մասին.

11) թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պարունակող դեղեր բաց թողնելու և (կամ) կիրառելու դեպքում՝ տեղեկանք տարածքների ազդանշանային համակարգով սարքավորված լինելու մասին (ընդգծել).

12) տեղեկանք՝ կլինիկական ամբիոն կամ ուսումնական բազա հանդիսանալու մասին (հանդիսանալու դեպքում).

13) տեղեկանք՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատության պահեստի հագեցվածության մաս

14) տարեկան պետական տուրքի վճարման անդորրագիրը:

Ներկայացված տեղեկությունների իսկությունը

հաստատում եմ _____

(կազմակերպության տնօրենի ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ օրը, ամիսը, տարեթիվը

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարար
լիցենզավորման հանձնաժողովի և

_____ (անունը, ազգանունը)

Հ Ա Յ Տ

ԼԻՑԵՆԶԻԱ ՄՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը _____
2. Անձնագրի սերիան և համարը _____
3. Անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը _____
4. Բնակության վայրը և հեռախոսահամարը _____
5. Գործունեության իրականացման վայրը և հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն և ինտերնետային պաշտ կայքի հասցեն (առկայության դեպքում) _____

6. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը (որին հավակնում է անհատ ձեռնարկատերը) _____

7. Հարկ վճարողի հաշվառման համարը _____

8. Կից ներկայացվող փաստաթղթերը՝

1) տեղեկանք՝ հայցվող բժշկական օգնության և սպասարկման տեսակների վերաբերյալ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 27-ի N 276-Ն որոշման.

2) տեղեկանք՝ առողջապահության բնագավառում տվյալ գործունեության համար անհրաժեշտ համապատասխան մասնագիտական կրթություն ունեցող մասնագետներով ապահովվածության մասին.

3) բժշկական ավագ, միջին և կրտսեր կադրերի հետ կնքված աշխատանքային պայմանագրերի պատճենները.

4) տեղեկանք՝ բժշկական սարքավորումներով ապահովվածության մասին՝ Հայաստանի Հանրապետության կառավարու 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N 1936-Ն և (կամ) Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի N 1275-Ն որոշումներին համապատասխան.

ի N 1275-Ն որոշումներին համապատասխան.

5) տեղեկանք՝ բժշկական հաստատության կառուցվածքային ստորաբաժանումների մասին.

6) լիցենզավորման ենթական գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի իրավունքի պետական գրանցման վկայականի և իրավասու մարմնի կողմից տրված գործունեության համար նախատեսված ս հատակագծի պատճենները.

7) հիվանդանոցային բժշկական հաստատությունների դեպքում՝ տեղեկանք շուրջօրյա հերթապահության իրականացմա համար անհրաժեշտ բժշկական կադրերով ապահովված լինելու մասին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2 թվականի դեկտեմբերի 5-ի N 1936-Ն որոշմանը համապատասխան.

8) հարկային մարմնի կողմից տրված տեղեկանք՝ գործունեության իրականացման վայրում հսկիչ-դրամարկղային մեքենա գրանցված լինելու մասին.

9) լիազոր մարմնի կողմից սահմանված բժշկական սարքավորումների տեխնիկական փաստաթղթերի պատճենները.

10) հիվանդանոցային բժշկական հաստատությունների դեպքում՝ տեղեկանք համապատասխան բաժանմունքում լիցենզ բժշկական օգնության և սպասարկման իրականացման համար առկա մահճակալների թվի մասին.

11) թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պարունակող դեղեր բաց թողնելու և (կամ) կիրառելու դեպքում՝ տեղեկանք տարածքների ազդանշանային համակարգով սարքավորված լինելու մասին (ընդգծել).

12) տեղեկանք՝ կլինիկական ամբիոն կամ ուսումնական բազա հանդիսանալու մասին (հանդիսանալու դեպքում).

13) տեղեկանք՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատության պահեստի հազեցվածության մաս

14) տարեկան պետական տուրքի վճարման անդորրագիրը:

Ներկայացված տեղեկությունների իսկությունը

հաստատում եմ _____

(անհատ ձեռնարկատիրոջ ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ օրը, ամիսը, տարեթիվը

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀԱՅՅՎՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N 276-Ն ՈՐՈՇՄԱՆ

Հայտատու կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը _____

Հայցվող բժշկական օգնության և սպասարկման տեսակները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվ մարտի 27-ի N 276-Ն որոշմամբ հաստատված բժշկական օգնության և սպասարկման օգնության տեսակների ցանկին համապատասխան, հետևյալն են՝

1. _____
2. _____
3. _____
4. _____

_____ օրը, ամիսը, տարեթիվը

_____ (կազմակերպության տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ ստորագրությունը)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 1936-Ն ԵՎ (ԿԱՍ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 1275-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԻՄԱՆ

Հայտատու կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը _____

Ըստ կաբինետների կամ բաժինների կամ բաժանմունքների՝ բժշկական ասրքավորումների հազեցվածությունը

_____ օրը, ամիսը, տարեթիվը

_____ (կազմակերպության տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ ստորագրությունը)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայտատու կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը

Կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

- 1. _____
- 2. _____
- 3. _____
- 4. _____
- 5. _____

_____ օրը, ամիսը, տարեթիվը

_____ (կազմակերպության տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ ստորագրությունը)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՇՈՒՐՋՕՐՅԱ ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲԺՇԿԱԿԱ ԿԱԴՐԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ՝ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐ 1936-Ն ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ

Հայտատու կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը

№/կ	Բաժանմունքի անվանումը	Մահճակալների թիվը	Հերթապահության մեջ ներգրավված բժիշկների թիվը՝ ըստ որակավորման	Հերթապահության մեջ ներգրավված բուժքույրերի թիվը	Հերթապահության մեջ սանիտարների թիվը

_____ օրը, ամիսը, տարեթիվը

_____ (կազմակերպության տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ ստորագրությունը)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՀԵՍՏ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայտատու իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը

Պահեստի տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է (քառ. մետր) _____

NN ը/կ	Հագեցվածությունը	Քանակը
1.	Խոնավաչափ	
2.	Փակ պահարաններ	
3.	Վիրակապական և ռետինե ապրանքների համար առանձին պահարաններ	

_____ օրը, ամիսը, տարեթիվը

_____ (կազմակերպության տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ ստորագրությունը)

Հավելված N 6
ՀՀ կառավարության 2002 թվական
հունիսի 29-ի N 867 որոշման



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Լ Ի Ց Ե Ն Ջ Ի Ա Կ - ԲՕ - 0 0 0 0 0

Տրված՝ _____ 20 թվականին
Բժշկական օգնության և սպասարկման տեսակը _____

Բժշկական օգնության և սպասարկման ձևը (արտահիվանդանոցային, հիվանդանոցային) _____

Կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը _____

Կազմակերպության գործունեության իրականացման վայրը _____

Գործողության ժամկետը՝ անժամկետ:

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարության
աշխատակազմի լիցենզավորման գործակալության պետ

_____ (ստորագրությունը)

Կ. Տ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Լ Ի Ց Ե Ն Ջ Ի Ա Ա - Բ Օ - 0 0 0 0 0

Տրված՝ _____ 20 թվականին
Բժշկական օգնության և սպասարկման տեսակը _____

Բժշկական օգնության և սպասարկման ձևը (արտահիվանդանոցային, հիվանդանոցային) _____

Անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և բնակության վայրը _____

Անհատ ձեռնարկատիրոջ գործունեության իրականացման վայրը _____

Գործողության ժամկետը՝ անժամկետ:

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարության
աշխատակազմի լիցենզավորման գործակալության պետ

_____ (ստորագրությունը)

Կ. Տ.

Կ Ա Ր Գ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
(ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ), ՄԻԶԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ (ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ) ԿՐԹԱ
ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետությունում բժշկական նախնական (արհեստագործական) մասնագիտական, միջին մասնագիտական և բարձրագույն կրթական ծրագրերի (այսուհետ՝ բժշկական կրթական ծրագրեր) իրականացման լիցենզավորման կարգը՝ համաձայն «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այս օրենք) պահանջների:
2. Հայաստանի Հանրապետությունում բժշկական կրթական ծրագրեր իրականացնելու համար լիցենզիան տալիս (մերժու լիցենզիայի գործողությունը կասեցնում կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում դադար է Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական լիազոր մարմինը՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը (այսուհետ՝ լիազոր մարմին):
3. Բժշկական կրթական ծրագրեր իրականացնելու համար լիցենզիաները տրվում են բարդ ընթացակարգով, անժամկետ՝ և սույն կարգով նախատեսված բոլոր փաստաթղթերը լիազոր մարմնին ներկայացնելուց հետո՝ 30 օրվա ընթացքում:
4. Լիցենզիա տալու, լիցենզիան վերաձևակերպելու համար գանձվում է տարեկան պետական տուրք՝ «Պետական տուրքի Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով:
5. Սույն կարգի համաձայն տրված լիցենզիաները գործում են միայն լիցենզիայում նշված վայրում:
6. Լիցենզիայի վերաձևակերպումը, գործողության կասեցումը և դադարեցումը կատարվում են օրենքով սահմանված կարգով:

II. ԼԻՑԵՆԶԻԱ ՄՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱԿԱՆՔԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵԼ ԿՈՂՄԻՅ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

7. Բժշկական կրթական ծրագրերի իրականացման լիցենզիա ստանալու համար հայտատուն լիազոր մարմին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝
 - 1) բժշկական կրթական ծրագրերի իրականացման լիցենզիա ստանալու մասին հայտը (NN 1 և 2 ձևերը կցվում են), որտեղ են՝
 - ա. իրավաբանական անձը՝ անվանումը և կազմակերպական-իրավական ձևը, պետական գրանցման համարը, գտնվելու հեռախոսահամարը, գործունեության իրականացման վայրը և հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն և ինտերնետ պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում), հարկ վճարողի հաշվառման համարը,
 - բ. անհատ ձեռնարկատերը՝ անունը, ազգանունը, անձնագրի սերիան և համարը, պետական հաշվառման համարը, բնակ վայրը և հեռախոսահամարը, գործունեության իրականացման վայրը և հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն և ինտերնետային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում), հարկ վճարողի հաշվառման համարը,
 - գ. կրթական գործունեության տեսակը և կրթության ձևը (առկա) (որին հավակնում է իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը),
 - դ. մասնագիտությունը՝ համապատասխան դասիչով,
 - ե. ուսուցման տևողությունը,
 - զ. ուսանողների համակազմի սահմանային թիվը,
 - է. ուսուցման ավարտին տրվող որակավորումը.
 - 2) տեղեկանքներ՝ ըստ կրթական ծրագրերի՝
 - ա. բարձրագույն բժշկական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների գիտամանկավարժա կադրերի, հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի մասին՝ համաձայն N 3 ձևի,
 - բ. նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական բժշկական ուսումնական հաստատության մանկավարժա դասախոսական կազմի մասին՝ համաձայն N 4 ձևի.
 - 3) տեղեկանք՝ լաբորատոր բազայի, վիճակագրական, ուսումնական տարածքների, այդ թվում՝ կրթական գործունեության իրականացման տարածքների և մարզական բազաներով ապահովվածության մասին՝ համաձայն N 5 ձևի.
 - 4) տեղեկանք՝ ուսումնամեթոդական ապահովման մասին, ինչպես նաև ուսումնամեթոդական փաստաթղթերի՝ պետակ կրթական չափորոշիչների պահանջներին համապատասխանությունը հավաստող փաստաթղթեր.
 - 5) տեղեկանք՝ ուսումնական պլանների մասին՝ համաձայն N 6 ձևի.
 - 6) տեղեկանք՝ ուսումնական, կլինիկական, մանկավարժական և արտադրական պրակտիկաների բազաներով ապահովման

մասին՝ համաձայն N 7 ձևի, ընդ որում, սեփական կլինիկական բազաների բացակայության դեպքում ներկայացվում է համապատասխան այլ բազաներից օգտվելու մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պայմանագրերի պատճենները.

7) տեղեկանք՝ գրադարանային-տեղեկատվական բազաների մասին, ինչպես նաև փաստաթղթեր ուսումնական և տեղեկ գրականությանը ապահովվածության մասին՝ համաձայն N 8 ձևի.

8) մասնագիտական ուսումնական պլանը, ուսումնական պլանով նախատեսված դասընթացների առարկայական ծրագրեր

9) ուսանողների ընդունելության, ամփոփիչ ատեստավորման, ակադեմիական շարժունության և դիպլոմային նախագծեյ պաշտպանության կարգերը.

10) տեղեկանք՝ ուսանողների ընդհանուր թվի մասին.

11) գրադարանի և մարզական բազաների հետ կնքված պայմանագրերի պատճենները.

12) հիմնական տարածքի նկատմամբ հայտատուի իրավունքի պետական գրանցման վկայականի և իրավասու մարմնի կ տրված գործունեության համար նախատեսված տարածքի հատակագծի պատճենները.

13) մանկավարժական և պրոֆեսորադասախոսական կազմի որակավորումը հաստատող փաստաթղթերը (կրթության մ փաստաթղթի (դիպլոմի) պատճենը).

14) կլինիկական ամբիոնի (բազայի) գործող լիցենզիաների պատճենները.

15) ուսումնական հաստատության հիմնական հաստիքային աշխատողների հետ կնքված աշխատանքային պայմանագր և

16) գործունեության իրականացման վայրում տեղադրված հսկիչ-դրամարկային մեքենայի գրանցման քարտի պատճենը

17) հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերը.

18) տարեկան պետական տուրքի վճարման անդորրագիրը:

8. Եթե ներկայացված հայտի և կից փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, ապա լիազոր մարմինն առաջարկում է 10-ժամկետում լրացնել այն:

9. Բժշկական կրթական ծրագրերի իրականացման լիցենզիա ստանալու համար ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկությունների համապատասխանությունը լիազոր մարմնի կողմից ուսումնասիրվում է տեղում, և ուսումնասիրության արդյունքների հիման վրա կազմվում է արձանագրություն:

III. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

10. Բարձրագույն բժշկական ուսումնական հաստատությունը պետք է բավարարի հետևյալ պահանջները՝

1) հիմնական մանկավարժական և պրոֆեսորադասախոսական կազմի մասով՝

ա. ուսումնական հաստատության դասախոսական անձնակազմի որակավորումը պետք է համապատասխանի պաշտոնյ դասավանդվող առարկաներին (դասավանդվող առարկայի գծով վերջին 5 տարում նվազագույնը 3 տարվա աշխատանքային տվյալ մասնագիտական որակավորում)՝ համաձայն պետական կրթական չափորոշիչների,

բ. մասնագիտական ամբիոնի վարիչը, պետք է լինի հիմնական աշխատող, ունենա դասավանդվող առարկային համապատասխան բարձրագույն կրթություն, առնվազն գիտությունների թեկնածուի կոչում և առնվազն 5 տարվա մանկավա ստաժ,

գ. պրոֆեսորադասախոսական կազմի առնվազն 50 տոկոսը պետք է լինի ուսումնական հաստատության հիմնական հաս աշխատող,

դ. պրոֆեսորադասախոսական կազմի առնվազն 50 տոկոսը պետք է ունենա գիտական աստիճան կամ գիտական կոչում, թվում՝ մեկական՝ պետական կրթական չափորոշիչներով սահմանված «Դեղագիտություն» մասնագիտության (060300) բնագ և կենսաբժշկական, կլինիկական և մասնագիտական կրթաբլոկների դասընթացների յուրաքանչյուր 100 ժամի հաշվարկով, «Ստոմատոլոգիա» մասնագիտության (060200) կենսաբժշկական, կլինիկական և մասնագիտական կրթաբլոկների դասընթաց յուրաքանչյուր 100 ժամի հաշվարկով, «Բուժական գործ» մասնագիտության (060100) կենսաբժշկական, ներքին հիվանդությո փրաբուժական հիվանդությունների, մանկաբուժական, մանկաբարձական և զինեկոլոգիական հիվանդությունների և կանխա բժշկության կրթաբլոկների դասընթացների յուրաքանչյուր 100 ժամի հաշվարկով,

ե. պրոֆեսորադասախոսական կազմի հաստիքների թիվը որոշվում է ուսանող-դասախոս հետևյալ հարաբերությամբ՝ 6 ուսանողին՝ առնվազն մեկ դասախոս,

զ. հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի տարեկան ծանրաբեռնվածությունը մեկ աշխատողի հաշվարկով պետք նվազագույնը 700 ժամ,

է. համաձայն ուսումնական պլանում նշված յուրաքանչյուր առարկայի ժամաքանակի ու ծրագրային խնդիրների՝ կազմակերպվում է ամբիոն կամ դասընթաց՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ամբիոնը պետք է ունենա առնվազն հինգ դասախոսից բաղկացած պրոֆեսորադասախոսական անձնակազմ.

2) լաբորատոր բազայի և ուսումնական տարածքի մասով՝

ա. բարձրագույն բժշկական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունները պետք է ունենան պե կրթական չափորոշիչներին համապատասխան տեխնիկական և տեխնոլոգիական հագեցվածությամբ ուսումնալաբորատոր ք մարզական տարածքներ (սեփականը չունենալու դեպքում՝ որևէ իրավունքով հատկացված),

բ. լաբորանները և ուսումնական սենյակները պետք է ապահովված լինեն ուսումնական բնականոն աշխատանքային պայվ և համապատասխանեն հետևյալ նորմերին՝ լաբորանների մակերեսը մեկ ուսանող/տեղի համար՝ լաբորանի լրակազմը 25-50 ո լինելու դեպքում՝ առնվազն 2,2 քառ. մետր, 50-75 ուսանող լինելու դեպքում՝ առնվազն 1,5 քառ. մետր, 75-ից ավելի ուսանող

դեպքում՝ 1,3 քառ. մետր, իսկ ուսումնական սենյակի մակերեսը՝ առնվազն 2,2 քառ. մետր՝ մեկ ուսանող/տեղի համար, գ. մեկ ուսանողի համար նախատեսվող ուսումնական ընդհանուր տարածքը պետք է կազմի առնվազն 12 քառ. մետր, դ. սպորտային դահլիճների ընդհանուր մակերեսը պետք է կազմի հիմնական տարածքների առնվազն 4 տոկոսը, ե. բարձրագույն բժշկական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունները պարտադիր պետք է կենդանիներով (շներ, կատուներ, ճագարներ, առնետներ, մկներ, գորտեր) ապահովված վիվարիում՝ ուսումնական և գիտահետազոտական աշխատանքները պատշաճ մակարդակով ապահովելու համար,

գ. բարձրագույն բժշկական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունը պետք է ունենա գիտահետազոտական կենտրոն (գիտական ստորաբաժանում),

է. ուսումնական սենյակները պետք է կահավորված լինեն սեղաններով, աթոռներով, պահարաններով, գրատախտակներով հագեցված լինեն անհրաժեշտ դիդակտիկ նյութերով,

ը. լսարանները պետք է հագեցված լինեն տեսաուցուցարանային հնարավորություններ ապահովող համապատասխան համակարգչային տեխնիկայով,

թ. բոլոր ամբիոնները (դասընթացները) պետք է ունենան դասասենյակներ, որտեղ պետք է տեղավորվեն առնվազն 16-17 ուսանողից բաղկացած ուսանողական խմբեր: Տեսական առարկաներ անցնող խմբում ուսանողների թիվը պետք է նախատես առավելագույնը 16, իսկ կլինիկական առարկաներ անցնող խմբում՝ առավելագույնը 12,

ժ. ամբիոնները պետք է ունենան սույն կարգով նախատեսված տեխնիկական և տեխնոլոգիական հագեցվածություն. անս ամբիոնում պարտադիր է ունենալ նաև սեղցիոն սենյակ և դիակային նյութեր՝ կմախքներ, ոսկրեր, թաց պրեպարատներ, կաղապարվածքներ (մույլաժներ), իսկ դատական բժշկության և ախտաբանական անատոմիայի ամբիոնների համար՝ նաև դիահերձարաններ (Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N 1936-Ն որոշմամբ նախատեսված տեխնիկական պահանջներին համապատասխան, իսկ սեփականը չունենալու դեպքում՝ քաղաքացիաիրավա պայմանագրերով սահմանված կարգով), համաձայն տվյալ առարկայի ծրագրի՝ համապատասխան ամբիոններում (կենսաբան հյուսվածքաբանության, ախտաբանական անատոմիայի, մանրէաբանության և այլն) ուսումնական խմբի առնվազն 2 ուսանող պետք է հատկացվի մեկ մանրադիտակ, հյուսվածքաբանության ամբիոնում՝ համապատասխան միկրոպրեպարատների, իսկ ախտաբանական անատոմիայի ամբիոնում՝ համապատասխան մակրո և միկրոպրեպարատների հավաքածուներ, դեղագործ կառավարում առարկայից. դասասենյակ՝ դեղատան մակետով (կահավորված դեղատան նման), ֆարմակոգնոզիա առարկայ յուրաքանչյուրին 1 մանրադիտակ, դասասենյակ՝ 1 գազահեղուկային քրոմատոգրաֆով,

ժա. բոլոր մասնագիտական ամբիոններում պարտադիր է ունենալ առնվազն 2 ուսումնական լաբորատոր սենյակներ,

ժբ. ստոմատոլոգիական ամբիոն հաճախող խմբերի յուրաքանչյուր 3-4 ուսանողի պետք է տրամադրվի մեկ ստոմատոլոգ բազկայթոռ, իսկ բուժական ֆակուլտետի յուրաքանչյուր ուսանողի՝ տվյալ կլինիկական բաժանմունքում՝ 1-2 մահճակալ,

ժգ. ամբիոնները պետք է ունենան համակարգչային ուսումնական սենյակներ (տվյալ դասին հաճախող յուրաքանչյուր ուս մեկ համակարգիչ), ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատությունում տեղադրված ինտերնետային կապից (առնվ կետում) օգտվելու հնարավորություն.

3) ուսումնամեթոդական ապահովման մասով՝

ա. ուսանողների ընդունելությունը պետք է իրականացվի համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մեկ կողմից հաստատված ընդունելության կարգի,

բ. ուսանողների գիտելիքների ստուգումը պետք է իրականացվի հարցման, թեստավորման, ատեստավորման, ստուգարքի քննության ձևերով,

գ. բարձրագույն բժշկական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունները պետք է ունենան կրթ պետական չափորոշիչներին համապատասխանող ուսումնական պլաններ և առարկայական ծրագրեր,

դ. յուրաքանչյուր ամբիոն, բացի ուսումնական ծրագրերից, պետք է ունենա նաև սահմանված կարգով հաստատված ուսումնամեթոդական ձեռնարկներ և մշակումներ,

ե. ուսումնական սենյակների, կաբինետների և լաբորատորիաների թիվը պետք է համապատասխանի ուսումնական պլանին

4) գրադարանային տեղեկատվական համակարգի մասով՝

ա. գրադարանային ֆոնդը պետք է համապատասխանի ուսումնական պլաններին և դասավանդվող առարկաների բնույթ պարբերաբար թարմացվի՝ տարեկան նվազագույնը 5 տոկոսի չափով՝ նոր անվանումների հաշվին,

բ. ըստ մասնագիտական դասագրքերի թվի՝ յուրաքանչյուր դասավանդվող առարկայի գծով յուրաքանչյուր ուսանողի հաշվական դասագիրք,

գ. անհրաժեշտ է ունենալ տեղեկատվամատենագիտական կատալոգ, որը կարող է լինել նաև թվային/համակարգչային, արձանագրերի սպասարկման տարածք՝ առնվազն 36 քառ. մետր,

դ. անհրաժեշտ է ունենալ գրապահոց (2,5 քառ. մետր՝ հազար միավոր գիրք ունեցող ֆոնդի համար),

ե. ընթերցասրահի տեղերի թիվը պետք է համապատասխանի հետևյալ նորմին՝ ուսանողների ընդհանուր թվի առնվազն տոկոսի հաշվով, մեկ տեղի համար՝ առնվազն 2,2 քառ. մետր: Ընթերցասրահի տեղերի առնվազն 35 տոկոսը պետք է հագեցվ համակարգիչներով և ունենա ինտերնետային կապ.

5) ուսումնաարտադրական պրակտիկայի բազայի գծով՝

ա. տեսական ամբիոնները պետք է տեղակայվեն բարձրագույն բժշկական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների հիմնական տարածքում, իսկ կլինիկական ամբիոնները՝ կլինիկական ամբիոն կամ ուսումնական բազա հանդիսացող լիցենզավորված բժշկական հաստատություններում, որոնց հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված են պայմանագրեր:

11. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական բժշկական ուսումնական հաստատու պետք է բավարարի հետևյալ պահանջները՝

1) հիմնական մանկավարժական և պրոֆեսորադասախոսական կազմի մասով՝

ա. ուսումնական հաստատության դասախոսական անձնակազմի որակավորումը պետք է համապատասխանի պաշտոնի դասավանդվող առարկաներին (դասավանդվող առարկայի գծով նվազագույնը 2 տարվա աշխատանքային փորձ և մասնագի որակավորում)՝ համաձայն կրթական չափորոշիչների,

բ. բաժնի վարիչը պետք է լինի հիմնական աշխատող, ունենա դասավանդվող առարկային համապատասխան բարձրագ կրթություն և առնվազն 5 տարվա մանկավարժական ստաժ,

գ. ուսումնական հաստատության հիմնական հաստիքային դասախոսների թիվը պետք է կազմի ընդհանուր դասախոսակ 50 տոկոսը,

դ. հիմնական և համատեղությամբ աշխատողների թիվը, նրանց բեռնվածությունը պետք է համապատասխանեն ուսումն պլաններին.

2) լաբորատոր բազայի և ուսումնական տարածքի մասով՝

ա. ուսումնական սենյակները և լաբորատորիաները պետք է ապահովված լինեն բնականոն աշխատանքային պայմաններ համապատասխան են հետևյալ նորմերին՝ լաբորանների մակերեսը՝ առնվազն 1,5 քառ. մետր՝ մեկ ուսանող/տեղի համար, ուսումնական սենյակի մակերեսը՝ առնվազն 2,2 քառ. մետր՝ մեկ ուսանող/տեղի համար,

բ. մեկ ուսանողի համար նախատեսվող ուսումնական ընդհանուր տարածքը պետք է կազմի առնվազն 8 քառ. մետր,

գ. բժշկական նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրական ուսումնական հաստատությունները պետք է ունենան պետական կրթական չափորոշիչներին համապատասխան ուսումնալա բազա, մարզական տարածքներ (կամ պայմանագիր՝ մարզական դասընթացները կազմակերպելու համար)՝ իրավական ակս ամրագրված տեխնիկական և տեխնոլոգիական հագեցվածությամբ,

դ. ուսումնական հաստատությունում պետք է լինի առնվազն մեկ համակարգչային ուսումնական սենյակ՝ հագեցված առ համակարգչով.

3) ուսումնամեթոդական ապահովման մասով՝

ա. նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական բժշկական ուսումնական հաստատու ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը պետք է համապատասխանեն նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության պետական չափորոշիչների պահանջներին,

բ. ուսանողների ընդունելությունը պետք է իրականացվի ըստ սահմանված կարգի,

գ. ընթացիկ քննությունները, պետական ամփոփիչ աստեսավորումը, ուսանողների տեղափոխումը և փոխադրումը պետ իրականացվեն օրենքով սահմանված կարգով.

4) գրադարանային տեղեկատվական համակարգի մասով՝

ա. գրադարանային ֆոնդը պետք է համապատասխանի ուսումնական պլաններին և դասավանդվող առարկաների բնույթ պարբերաբար թարմացվի՝ տարեկան նվազագույնը 3 տոկոսի չափով՝ նոր անվանումների հաշվին,

բ. ըստ մասնագիտական դասագրքերի թվի՝ յուրաքանչյուր դասավանդվող առարկայի գծով յուրաքանչյուր ուսանողի պետ տրամադրվի առնվազն մեկ դասագիրք,

գ. անհրաժեշտ է ունենալ տեղեկատվամատենագիտական կատալոգ, որը կարող է լինել նաև թվային/համակարգչային, արձաններին սպասարկման տարածք՝ (960 և ավելի դեպքում՝ 18-36 քառ. մետր),

դ. անհրաժեշտ է ունենալ գրապահոց (2,5 քառակուսի մետր՝ հազար միավոր գիրք ունեցող ֆոնդի համար),

ե. ընթերցասարահի տեղերի թիվը պետք է համապատասխանի հետևյալ նորմին՝ ուսանողների ընդհանուր թվի առնվազն տոկոսի հաշվով, մեկ տեղի համար՝ առնվազն 2,2 քառ. մետր: Ընթերցասարահի յուրաքանչյուր տեղը պետք է հագեցված լինի համակարգիչներով, ունենա ինտերնետային կապ.

5) ուսումնասարտադրական պրակտիկայի բազայի գծով՝

ա. ուսումնական հաստատությունը պետք է ապահովված լինի լիցենզավորված, կլինիկական ամբիոն կամ ուսումնական հանդիսացող կլինիկական բազաներով, որոնց հետ սահմանված կարգով կնքված են պայմանագրեր:

12. Բժշկական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունները լիցենզավորված բժշկական օգնու պասարկում իրականացնող կազմակերպություններում պետք է ունենան կլինիկական և արտադրական ուսումնական բազա

13. Հայաստանի Հանրապետությունում բժշկական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություննե կանխիկ դրամով իրականացվող հաշվարկների բոլոր դեպքերում կիրառվում են հսկիչ-դրամարկղային մեքենաներ:

14. Բժշկական կրթական ծրագրերի իրականացման լիցենզիայի պատճենները փակցվում են ուսումնական հաստատությ դիմորդների և ուսանողների համար տեսանելի հատվածում:

15. Բժշկական կրթական ծրագրերի իրականացման համար սահմանված պարտադիր պահանջների և պայմանների փով դեպքում (ներառյալ համապատասխան մասնագետի, գործունեության իրականացման վայրի, հագեցվածության փոփոխման լիցենզավորված անձը 15 օրվա ընթացքում լիազոր մարմնին հայտնում է իրականացված փոփոխության մասին՝ կցելով համապատասխան փաստաթղթերը:

IV. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՄԵՆԺՄԱՆ ՀԻՍՔԵՐԸ

16. Լիցենզիա ստանալու մասին հայտը մերժվում է, եթե՝

- 1) ներկայացված հայտը և կից փաստաթղթերը թերի են և չեն լրացվել սույն կարգի 8-րդ կետով նախատեսված ժամկետո դրանցում առկա են ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված տեղեկություններ կամ,
- 2) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքի, այլ իրավական ակտերի և սույն կարգի պահանջնեկ
- 3) իրավաբանական անձն օրենքի կամ իր կանոնադրության համաձայն իրավունք չունի զբաղվելու հայցվող լիցենզավորու ենթակա գործունեությամբ կամ,
- 4) բժշկական կրթական ծրագրերի իրականացման համար նախատեսված տարածքը սեփականության, վարձակալության ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով չի պատկանում հայտատուին կամ,
- 5) սույն կարգի 10-12 կետերով սահմանված լիցենզավորման պարտադիր պահանջներին և պայմաններին չհամապատաս դեպքում.
- 6) օրենքով և սույն կարգով նախատեսված այլ դեպքերում:
17. Լիցենզիա ստանալու հայտը մերժվելու մասին որոշումն ընդունվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում առ հայտատուին:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախար
լիցենզավորման հանձնաժողովի և

(անունը, ազգանունը)

Հ Ա Յ Տ
Լ Ի Ց Ե Ն Զ Ի Ա Մ Տ Ա Ն Ա Լ ՈՒ Ւ Մ Ա Մ Ի Ն

1. Իրավաբանական անձի անվանումը և կազմակերպական-իրավական ձևը _____
2. Իրավաբանական անձի պետական գրանցման համար _____
3. Իրավաբանական անձի գտնվելու վայրը և հեռախոսահամարը _____
4. Իրավաբանական անձի գործունեության իրականացման վայրը և հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն և ինտերնետային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում) _____
5. Կրթական գործունեության տեսակը և կրթության ձևը (որին հավակնում է իրավաբանական անձը) _____
6. Մասնագիտությունը՝ համապատասխան դասիչով _____
7. Ուսուցման տևողությունը _____
8. Ուսուցման ավարտին տրվող որակավորումը _____
9. Ուսանողների համակազմի սահմանային թիվը _____
10. Հարկ վճարողի հաշվառման համարը _____
11. Կից ներկայացվող փաստաթղթերը՝
 - 1) տեղեկանք՝ գիտամանկավարժական կադրերի մասին.
 - 2) տեղեկանք՝ լաբորատոր բազայի, վիվիսիոմի, ուսումնական տարածքների, այդ թվում՝ կրթական գործունեության իրականացման տարածքների և մարզական բազաներով ապահովվածության մասին.
 - 3) տեղեկանք՝ ուսումնամեթոդական ապահովման մասին, ինչպես նաև՝ ուսումնամեթոդական փաստաթղթերի՝ պետակ կրթական չափորոշիչների պահանջներին համապատասխանությունը հավաստող փաստաթղթեր.
 - 4) տեղեկանք՝ ուսումնական պլանների մասին.
 - 5) տեղեկանք՝ ուսումնական, կլինիկական, մանկավարժական և արտադրական պրակտիկաների բազաներով ապահովմ սեփական կլինիկական բազաների բացակայության դեպքում՝ համապատասխան այլ բազաներից օգտվելու մասին Հայաստո Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված պայմանագրերի պատճենները (ընդգծել)
 - 6) տեղեկանք՝ գրադարանային-տեղեկատվական բազաների մասին, ինչպես նաև փաստաթղթեր ուսումնական և տեղեկ գրականությամբ ապահովվածության մասին.
 - 7) մասնագիտական ուսումնական պլան, ուսումնական պլանով նախատեսված դասընթացների առարկայական ծրագրեկ
 - 8) ուսանողների ընդունելության, ամփոփիչ ատեստավորման, ակադեմիական շարժունության և դիպլոմային նախագծեկ պաշտպանության կարգերը.
 - 9) տեղեկանք՝ ուսանողների ընդհանուր թվի մասին.
 - 10) գրադարանի և մարզական բազաների հետ կնքված պայմանագրերի պատճենները.
 - 11) հիմնական տարածքի նկատմամբ հայտատուի իրավունքի պետական գրանցման վկայականի և իրավասու մարմնի կ տրված գործունեության համար նախատեսված տարածքի հատակագծի պատճենները.

12) մանկավարժական և պրոֆեսորադասախոսական կազմի որակավորումը հաստատող փաստաթղթերը (կրթության մեջ փաստաթղթի (դիպլոմ) պատճենը).

13) կլինիկական ամբիոնի (բազայի) գործող լիցենզիաների պատճենները.

14) ուսումնական հաստատության հիմնական հաստիքային աշխատողների հետ կնքված աշխատանքային պայմանագրի

15) հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերը.

16) գործունեության իրականացման վայրում տեղադրված հսկիչ-դրամարկային մեքենայի գրանցման քարտի պատճենը

17) տարեկան պետական տուրքի վճարման անդորրագիրը:

Ներկայացված տեղեկությունների իսկությունը

հաստատում եմ _____

(իրավաբանական անձի տնօրենի ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ օրը, ամիսը, տարեթիվը

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարար
լիցենզավորման հանձնաժողովի ն

_____ (անունը, ազգանունը)

Հ Ա Յ Տ

ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը _____

2. Անձնագրի սերիան և համարը _____

3. Անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը _____

4. Բնակության վայրը և հեռախոսահամարը _____

5. Գործունեության իրականացման վայրը և հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն և ինտերնետային պաշտ կայքի հասցեն (առկայության դեպքում) _____

6. Կրթական գործունեության տեսակը և կրթության ձևը (որին հավակնում է անհատ ձեռնարկատերը) _____

7. Մասնագիտությունը՝ համապատասխան դասիչով _____

8. Ուսուցման տևողությունը _____

9. Ուսանողների համակազմի սահմանային թիվը _____

10. Ուսուցման ավարտին տրվող որակավորումը _____

11. Հարկ վճարողի հաշվառման համարը _____

12. Կից ներկայացվող փաստաթղթերը՝

1) տեղեկանք՝ գիտամանկավարժական կադրերի մասին.

2) տեղեկանք՝ լաբորատոր բազայի, վիճակագրության և ուսումնական տարածքների, այդ թվում՝ կրթական գործունեության իրականացման տարածքների և մարզական բազաներով ապահովվածության մասին.

3) տեղեկանք՝ ուսումնամեթոդական ապահովման մասին, ինչպես նաև ուսումնամեթոդական փաստաթղթերի՝ պետակա կրթական չափորոշիչների պահանջներին համապատասխանությունը հավաստող փաստաթղթեր.

4 տեղեկանք՝ ուսումնական պլանների մասին.

5) տեղեկանք՝ ուսումնական, կլինիկական, մանկավարժական և արտադրական պրակտիկաների բազաներով ապահովման մասին կլինիկական բազաների բացակայության դեպքում՝ համապատասխան այլ բազաներից օգտվելու մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված պայմանագրերի պատճենները (ընդգծել).

6) տեղեկանք՝ գրադարանային-տեղեկատվական բազաների մասին, ինչպես նաև փաստաթղթեր ուսումնական և տեղեկա գրականությամբ ապահովվածության մասին.

7) մասնագիտական ուսումնական պլան, ուսումնական պլանով նախատեսված դասընթացների առարկայական ծրագրերը

8) ուսանողների ընդունելության, ամփոփիչ ատեստավորման, ակադեմիական շարժունության և դիպլոմային նախագծել պաշտպանության կարգերը.

9) ուսանողների ընդհանուր թվի մասին փաստաթուղթ.

- 10) գրադարանների և մարզական բազաների հետ կնքված պայմանագրերի պատճենները.
- 11) հիմնական տարածքի նկատմամբ հայտատուի իրավունքի պետական գրանցման վկայականի և իրավասու մարմնի կտրված գործունեության համար նախատեսված տարածքի հատակագծի պատճենները.
- 12) մանկավարժական և պրոֆեսորադասախոսական կազմի որակավորումը հաստատող փաստաթղթերը, (կրթության մ փաստաթղթի (դիպլոմ) պատճենը).
- 13) կլինիկական ամբիոնի (բազայի) գործող լիցենզիաների պատճենները.
- 14) ուսումնական հաստատության հիմնական հաստիքային աշխատողների հետ կնքված աշխատանքային պայմանագրի
- 15) հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերը.
- 16) գործունեության իրականացման վայրում տեղադրված հսկիչ-դրամարկղային մեքենայի գրանցման քարտի պատճենը
- 17) տարեկան պետական տուրքի վճարման անդորրագիրը:

Ներկայացված տեղեկությունների իսկությունը

հաստատում եմ _____

(անհատ ձեռնարկատիրոջ ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ 201 թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ, ՀԻՄՆԱԿԱՆ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

NN ը/կ	Անունը, ազգանունը	Որակա- վորումը	Գիտական աստիճանը	Գիտական կոչումը	Դասավանդ- վող առարկան	Պաշտոնը	Հաստիքը	
							հիմնական աշխատող	համատեղությամբ աշխատող
1.								
2.								

Ներկայացված տեղեկությունների իսկությունը

հաստատում եմ _____

(իրավաբանական անձի տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ օրը, ամիսը, տարեթիվը

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻԶԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԲԺՇԿԱ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

NN ը/կ	Անունը, ազգանունը	Որակավորումը	Մանկավարժական ստաժը	Գիտական աստիճանը	Գիտական կոչումը	Դասա- վանդվող առարկան	Պաշտոնը	Հաստիքը
-----------	----------------------	--------------	------------------------	---------------------	--------------------	--------------------------	---------	---------

								հիմնական աշխատող	համատե աշխ
1.									
2.									

Ներկայացված տեղեկությունների իսկությունը

հաստատում եմ _____

(իրավաբանական անձի տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ օրը, ամիսը, տարեթիվը

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԼԱԲՈՐԱՏՈՐ ԲԱԶԱՅԻ, ՎԻՎԱՐԻՈՒՄԻ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ԿՐԹԱ՝ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԶԱԿԱՆ ԲԱԶԱՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒ ՄԱՍԻՆ

NN ը/կ	Կրթական գործունեություն իրականացնելու համար հատկացվող տարածքը	Տարածքի նկատմամբ իրավունքը (սեփական, վարձակալական և այլն)	Թիվը (հատ)	Ընդհանուր մակերեսը (քառ. մետր)
1.	Լսարաններ, այդ թվում՝ դասախոսությունների համար գործնական և սեմինար պարապմունքների համար			
2.	Լաբորատորիաներ			
3.	Ուսումնական դիդակտիկ նյութերով և սարքավորումներով հագեցված կաբինետներ			
4.	Համակարգչային դասարաններ			
5.	Գրադարան, այդ թվում՝ գրապահոց ընթերցասրահներ			

NN ը/կ	Էլեկտիվ առարկաներ	Կիսամյակ	Ժամ

Ներկայացված տեղեկությունների իսկությունը

հաստատում եմ _____

(իրավաբանական անձի տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ 20 թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԿԼԻՆԻԿԱԿԱՆ, ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ ԲԱԶԱ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ

Ուսումնական բազա		Կլինիկական բազա		Մանկավարժական բազա		Արտադրական բազա	
սեփական	վարձակալական	սեփական	վարձակալական	սեփական	վարձակալական	սեփական	վարձակալական

Ներկայացված տեղեկությունների իսկությունը

հաստատում եմ _____

(իրավաբանական անձի տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ օրը, ամիսը, տարեթիվը

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԶԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գրադարանի ընդհանուր վիճակը (համառոտ նկարագրությունը)	Գրադարանային ֆոնդի ծավալը		Տեղեկատվական համակարգի վիճակը, համակարգիչների քանակը (համառոտ նկարագրությունը)
	ուսումնական գրականություն	մասնագիտական տեղեկատվական գրականության քանակը	

Ներկայացված տեղեկությունների իսկությունը

հաստատում եմ _____

(իրավաբանական անձի տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ օրը, ամիսը, տարեթիվը

Հավելված N 8
ՀՀ կառավարության 2002 թվական
հունիսի 29-ի N 867 որոշման



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Լ Ի Ց Ե Ն Ջ Ի Ա Կ - ԲԿ - 0 0 0 0 0 0

Տրված՝ _____ 20 թվականին

Գործունեության տեսակը _____

Իրավաբանական անձի անվանումը և գտնվելու վայրը _____

Գործունեության իրականացման վայրը _____

Գործողության ժամկետը՝ անժամկետ:

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարության
աշխատակազմի լիցենզավորման գործակալության պետ

_____ (ստորագրությունը)

Կ. Տ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Լ Ի Ց Ե Ն Ջ Ի Ա Ա - ԲԿ - 0 0 0 0 0 0

Տրված՝ _____ 20 թվականին

Գործունեության տեսակը _____

Անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և բնակության վայրը _____

Գործունեության իրականացման վայրը _____

Գործողության ժամկետը՝ անժամկետ:

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարության
աշխատակազմի լիցենզավորման գործակալության պետ

_____ (ստորագրությունը)

Կ. Տ. »:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար

Դ. Ս